Պաուլո Կոելիո

Լույսի զինվորի գիրքը

Նախաբան

Աշակերտն իր ուսուցչից բարձր չի լինում, բայց կատարելագործվելով յուրաքանչյուր ոք կարող է լինել այնպիսին, ինչպիսին իր ուսուցիչն է:

Ղուկասի Ավետարան 6; 40

Գյուղից արևելք՝ ծովի ափին, վեր է խոյանում մի վիթխարի տաճար՝ մեծաքանակ զանգերով, - ասաց կինը:

Տղան նկատեց, որ նրա հագին ոչ սովորական հագուստ է, և գլխին գլխաշոր կա: Նա նախկինում երբեք չէր հանդիպել կնոջը:

-Տեսնում ես, - շարունակեց նա: - Դու կգնաս այնտեղ ու հետո կպատմես այն ամենի մասին, ինչ որ կգտնես այնտեղ:

Տղան, նրա գեղեցկությամբ ապշահար, շարժվեց այն ուղղությամբ, դեպի ուր իրեն ասված էր: Նստեց ավազին, հայացքը հառեց հորիզոնին, բայց տեսավ նորից այն, ինչ սովոր էր միշտ տեսնելու՝ կապույտ երկինքն ու օվկիանոսը:

Նա հիսթափված հասավ հարևան ձկնորսական ավանը, հարցրեց տեղի բնակիչներին, թե չգիտե՞ն արդյոք՝ որտեղ է այն կղզին, որի վրա վեր է խոյանում տաճարը:

-Բայց դա շատ վաղուց է եղել՝ իմ նախապապերի ժամանակ, - պատասխանեց նրան հին ձկնորսը: - Հետո երկրաշարժ եղավ, և կղզին անհետացավ ծովի խորքերում: Այն մինչև հիմա էլ ծովի հատակին է, բայց մենք, չնայած այլևս չենք տեսնում այն, այնուամենայնիվ երբեմն լսում ենք ջրի խորքերից մեզ հասնող զանգերի ղողանջը:

Տղան ափ վերադարձավ ու սկսեց ունկնդրել՝ հուսալով, որ կորսա այդ ղողանջը: Նա մինչև ուշ երեկո նստեց ծովի ափին, բայց լսեց միայն ալիքների խշշոցն ու ճայերի կռինչը:

Երբ գիշերն իջավ, ծնողները եկան նրա ետևից և տուն տարան: Իսկ առավոտ կանուխ նա կրկին ծովափին էր, քանզի չէր հավատում, որ այդ չքնաղ կինը կարող էր իրեն խաբած լինել:

Եթե նրանք երբևէ դարձյալ հանդիպեն, նա իրավացիորեն կասի կնոջը, որ, ճիշտ է, կղզին չի տեսել, բայց դե լսել է, թե ինչպես են ստորջրյա հոսանքները տարուբերում տաճարի զանգերը ՝ հարկադրելով դրանց հնչել:

Այդպես անցան շատ ամիսներ, գեղեցկուհին այդպես էլ չվերադարձավ, և տղան մոռացավ նրան. այժմ նա անկասկած վստահ էր, որ ինքը պետք է հայտնաբերի ծովի խորքերն անցած տաճարի զանձերը: Զանգերի ղողանջով նա կորոշի դրանց տեղը և այդժամ կկարողանա հայտնաբերել թաքցրած զանձերը:

Շուտով նա կորցրեց հետաքրքրությունը դպրոցի ու ընկերների հանդեպ: Նա ծաղրանքի ու սրախոսության թիրախ դարձավ իր հասակակիցների համար, ովքեր հաստատում էին. «Նա այնպիսին չէ, ինչպիսին մենք, ժամերով նայում է ծովին՝ փոխանակ մեզ հետ խաղալու»:

Եվ նայելով, թե նա ինչպես է նստած ծովափին, բոլորը զվարճանում էին տղայով:

Նրան այդպես էլ չհաջողվեց լսել զանգերի ղողանջը, բայց տղան մի ուրիշ բան սովորեց: Կամաց – կամաց նա սկսեց հասկանալ, որ ալիքների շառաչը, որոնք նա այսքան օրեր լսում է, արդեն չեն շեղում իրեն, իսկ հետո բավական արագ հարմարվեց անտեսել նաև ճայերի կռինչը, և՛ մեղուների բզզոցը, և՛ արմավենու սաղարթներում սուլող քամու աղմուկը:

Գեղեցկուհու հետ հանդիպումից անցել էր արդեն վեց ամիս, և տղան արդեն ոչ մի ձայնի վրա չշեղվելու ընդունակություն էր ձեռք բերել, բայց և ծովի հատակն անցած տաճարի զանգերի ղողանջը դեռ չէր լսել:

Ձկնորսներ էին գալիս նրա մոտ և համառորեն պնդում. «Մենք լսել ենք»:

Իսկ տղային լսել չէր հաջողվում:

Որոշ ժամանակ անց ձկնորսները սկսեցին նրա հետ այլ կերպ խոսել. «Դու, - ասում էին նրանք, - չափից ավելի ես մտահոգվում , որ լսես ծովի խորքերից եկող այդ ղողանջները. մոռացի՛ր դրա մասին, վերադարձի՛ր ընկերներիդ մոտ և քո նախկին զբաղմունքին: Գուցե միայն ձկնորսներին է տրված՝ լսելու այդ ղողանջները»:

Իսկ երբ արդեն մի տարի անցավ, տղան մտածեց. «Գուցե նրանք ճիշտ են: Կմեծանամ, ձկնորս կդառնամ և էլ ամեն առավոտ այս ափը չեմ գա, որովհետև այն ինձ դուր չի գալիս»: Եվ ապա շարունակեց մտածել. «Հավանաբար այս ամենը լեգենդ է , իսկ եթե՝ ոչ, ապա ուրեմն երկրաշարժից զանգերը ջարդվել են և էլ երբեք չեն ղողանջելու»:

Այդ օրը նա որոշեց տուն վերադառնալ: Նա մի վերջին անգամ ցանկություն ունեցավ մինչև վերջ մոտենալու ափեզրին՝ օվկիանոսին հրաժեշտ տալու համար: Մի անգամ ևս նա հայացք ձգեց այն ամենին, ինչ շրջապատում էր իրեն, և քանի որ այլևս պետք չէր լսել՝ ղողանջում են արդյոք զանգերը, թե՝ ոչ, նա կարողացավ ժպտալ՝ արդեն ուշադրություն դարձնելով ճայերի կռինչին, ալիքների շառաչին, արմավենու սաղարթներում լսվող քամու աղմուկին: Հեռվից նրան հասան ընկերների ձայները, և նա ուրախացավ, որ շատ շուտով ինքը վերադառնալու է իր մանկական զվարճանքներին:

Այո՛, նա զգաց ուրախություն և երախտագիտության զգացում նրա համար, որ ինքն ապրում է այս աշխարհում. այդ երախտագիտությունը հասանելի է միայն երեխաներին: Նա համոզված էր, որ ժամանակը դատարկ տեղը չի վատնել, քանզի սովորել է զննել ու կարդալ բնությունը:

Եվ ահա, քանի որ նրա համար ըմբռնելի դարձան ալիքների շառաչը, ճայերի կռինչն ու տերևների խշշոցը, հեռվում խաղացող ընկերների ձայները, նա լսեց նաև զանգերի առաջին հարվածը: Հետո ևս մեկը: Հետո էլի ու էլի, և ահա, երբ նրա հոգին պարուրվեց հրճվանքով, ղողանջեցին ջրասույզ եղած տաճարի բոլոր զանգերը:

Շատ տարիներ անց՝ արդեն հասակ առած, նա վերադարձավ ծովափի այն նույն գյուղը, որտեղ անցել էր իր մանկությունը: Նա վաղուց էր հրաժեշտ տվել այն մտքին, որ ծովի խորքերից երբևէ հանելու է եղած գանձերը. գուցե այս բոլորը գոյություն են ունեցել շատ – շատ վաղուց իր երևակայության մեջ, և իր մանկական հիշողության մոռացված խորքերում չի էլ եղել այն երեկոն, երբ իրեն լսելի դարձավ տաճարի զանգերի ղողանջը: Այնուամենայնիվ նա

ցանկություն ունեցավ մի քիչ քայլել ծովափով ու լսել քամու շառաչն ու ճայերի կռինչը:

Եվ անչափելի էր իր զարմանքը, երբ տեսավ, որ ավազների վրա նստած է այն նույն կինը, ով իրեն պատմել էր անհետացած կղզու վրա գտնվող տաճարի մասին:

-Ի՞նչ եք անում այստեղ, - հարցրեց տղան:

-Քեզ եմ սպասում, - պատասխանեց կինը:

Չնայած շատ տարիներ էին անցել, բայց կինը մնացել էր այնպիսին, ինչպիսին իրենց հանդիպման առաջին օրն էր, և գլխաշորը, որի տակ նա թաքցրել էր մազերը, տարիների ընթացքում ո՛չ խունացել էր, ո՛չ էլ մաշվել:

Նա տղային պարզեց կապույտ կազմով մաքուր տետրը և ասաց.

-Գրի՛ր. «Լույսի զինվորը ուշադիր նայում է մանկական աչքերին, քանզի նրանց է տրված տեսնելու ցավ ու վշտերից զերծ աշխարհը: Երբ լույսի զինվորն ուզում է իմանալ, թե իր կողքին կանգնողն արդյոք արժանի է վստահության, նա ջանում է տեսնել նրան մանկան աչքերով»:

-Իսկ ո՞վ է «լույսի զինվորը»:

-Ինքդ գիտես, - ժպիտով պատասխանեց կինը: -Նա, ով ընդունակ է հասնելու կյանքի հրաշքին, մինչև վերջ պայքարելու նրա համար, ինչին հավատում է և լսելու ծովի խորքերից հնչող զանգերի ղողանջը:

Նա իրեն երբեք լույսի զինվոր չէր համարել: Բայց կինը, հավանաբար կարդալով նրա մտքերը, ասաց. «Դրան ընդունակ են բոլորը: Եվ չնայած ոչ ոք իրեն լույսի զինվոր չի համարում, այնուամենայնիվ ամեն մարդ կարող է լույսի զինվոր դառնալ»:

Տղան նայում էր տետրի էջերին: Կինը դարձյալ ժպտաց:

-Գրի՛ր լույսի զինվորի մասին, - ասաց նա:

1

Լույսի զինվորը չի մոռանում բարիքը:

Կռվում նրան օգնում են հրեշտակները. երկնային ուժերը ամեն ինչ այնպես են դասավորում, որ հնարավորություն են տալիս նրան լավագույնս դրսևորելու իրեն: «Ո՜նց է բախտը բերում», - ասում են ընկերները:

Իսկ լույսի զինվորին հաճախ է հաջողվում այն, ինչ վեր է մարդկային ուժերից: Դրա համար էլ ամեն արևածագի նա ծնկի է գալիս ու գոհացում հայտնում իրեն պահպանող բարեգութ հովանավորության համար:

Սակայն լույսի զինվորի երախտագիտությունը միայն հոգևոր ոլորտով չի սահմանափակվում. նա երբեք չի մոռանում ընկերներին, որովհետև իրենք միասին են արյուն թափել մարտի դաշտում:

Կարիք չկա լույսի զինվորին հիշեցնելու ուրիշների ցուցաբերած օգնության մասին: Նա ինքը միշտ հիշում է դա և բոլոր պարգևները կիսում նրանց հետ:

2

Աշխարհի բոլոր ճանապարհները տանում են դեպի լույսի զինվորի սիրտը. նա առանց երկմտելու նետվում է հորձանուտը կրքերի, որոնցով մշտապես լի է նրա կյանքը:

Զինվորը գիտե, որ ինքն ազատ է իր ընտրության մեջ, նա խիզախորեն է որոշում կայացնում՝ առանց ետ նայելու, իսկ հաճախ նաև՝ գլուխը կորցրած:

Նա սիրում է իր կրքերը և քաղում դրանց պտուղները: Նա գիտե՝ պետք չէ հրաժարվել հաղթանակների նվիրած բերկրանքից: Հաղթանակները կյանքի մի մասն են, և ուրախացնում են նրանց հոգիները, ովքեր հասել են դրանց:

Բայց երբեք զինվորը տեսադաշտից չի կորցնում այն, ինչ ստեղծվում է դարերի համար, հիշում է, թե որքան ամուր են այդ կապերը, և ժամանակն ինչքան անզոր է դրանց դեմ:

Լույսի զինվորը կարողանում է զանազանել անցողիկը հաստատունից:

3

Լույսի զինվորը հույսը դնում է ոչ միայն սեփական ուժերի վրա, այլև օգտագործում է իր հակառակորդի էներգիան:

Նա մարտի է նետվում զինված միայն արվեստով խանդավառության և հարվածելու ու հակահարված տալու՝ մարտի հնարքներ, որոնք նա երկար սովորել է: Սակայն հետո գիտակցում է, որ ո՛չ խանդավառությունը, ո՛չ էլ հմտությունները բավարար չեն հաղթանակի հասնելու համար. անհրաժեշտ է նաև փորձառություն:

Եվ այդ ժամանակ նա բացում է իր սիրտը տիեզերքի առաջ ու խնդրում, որ Աստված խելք տա ու ոգևորի իրեն՝ հակառակորդի յուրաքանչյուր հարվածից «պաշտպանություն» գիտության դասեր քաղելու: «Նա լի է նախապաշարումներով,- ասում են ուղեկիցները: -Դադարեցնում է մարտը և աղոթում: Իսկ հակառակորդին հենց դա էլ հարկավոր է»:

Լույսի զինվորը բանի տեղ չի դնում ծաղրական խոսքերին, քանզի գիտե, որ ամեն մի ուսումնառություն, առանց խանդավառության ու փորձի, իզուր կորած է:

4

Լույսի զինվորը երբեք չի գնում խարդավանքների, բայց կարողանում է շեղել հակառակորդին և մոլորության մեջ գցել:

Որքան էլ նրա հոգին տոչորում է հաղթական նպատակին հասնելու անհագ ծարավը, միևնույն է, նա չի խուսափում խաղեր տալուց և այսպես ռազմավար է դառնում: Զգալով, որ ուժերը տեղի են տալիս՝ նա ստիպում է հակառակորդին մտածել, թե ինքը չի շտապում, պատրաստվելով հարձակվել աջ թևի վրա, նա իր զորքերը տեղափոխում է ձախակողմ:

Պատրաստվելով անհապաղ սկսել ճակատամարտը՝ ձևացնում է, թե իրեն պատել է նինջը և իբր ուր որ է՝ քնելու է:

‹‹Տեսե՛ք՝ ոնց է ընկել նրա մարտական ոգին››,- ասում են ընկերները: Այնինչ լույսի զինվորը բանի տեղ չի դնում այդ դիտողությունները, քանզի բարեկամներին անգամ անհասանելի են այն խորամանկություններն ու հնարքները, որոնք նա կիրառում է ռազմադաշտում:

Լույսի զինվորը գիտե, թե ինչ է ուզում: Եվ իր ծրագրերը բացատրելու կարիքը չունի:

5

Ահա թե ինչ է ասում լույսի զինվորի ռազմավարության մասին չինացի իմաստունը:

« Քո թշնամուն հարկադրի՛ր հավատալ, որ նա քիչ բանի կհասնի՝ քեզ վրա հարձակվելով, և դրանով դու կթուլացնես նրա մարտական եռանդը:

Եթե հասկացել ես, որ հակառակորդը գերազանցում է քեզ, մի՛ ամաչիր ռազմի դաշտը նրան զիջելուց, քանզի կարևոր է ոչ թե մի ճակատամարտի արդյունքը, այլ պատերազմի վերջնական ելքը:

Եթե քո ուժերը բավարար են, մի կո՛ղմ նետիր կեղծ ամոթը և թու՛յլ ձևացիր: Դա կստիպի հակառակորդին կորցնել զգուշավորությունը և հաձակվել քեզ վրա՝ չսպասելով հարմար պահի:

Հակառակորդին հանկարծակիի բերելու ունակությունը հաղթանակի գրավականն է պատերազմում»:

6

«Տարօրինակ է,-ինքն իրեն խորհում է լույսի զինվորը,- ինձ այնքան շատ մարդիկ են հանդիպել, ովքեր առաջին իսկ հնարավորության դեպքում ձգտում են ներկայանալ իրենց ամենավատ կողմերով: Զինվորական ճնշման տակ նրանք թաքցնում են իրենց ներքին ուժը, մենակության վախը ծածկում են անկախության դիմակով: Նրանք չեն հավատում սեփական հնարավորություններին, բայց ամեն անկյունում ազդարարում են իրնց առաքինությունների և արժանիքների մասին»:

Զինվորը տեսնում է այդ հատկանիշը շատ կանանց ու տղամարդկանց մեջ, որոնց ճանաչել է: Բայց նա երբեք չի տրվում խաբեությանը, չի հավատում առաջին տպավորությանը, իսկ եթե ցանկանում են հետաքրքրել ու զարմացնել նրան, համառորեն լռություն է պահպանում: Սակայն անխտիր օգտվում է նա ցանկացած հարմար պահից, որ շտկի իր թերությունները, քանզի, ինչպես հայելու մեջ, ինքն իրեն տեսնում է ուրիշ մարդկանց մեջ:

Լույսի զինվորը միշտ բաց է՝ ամեն մի նոր բան սովորելու համար:

7

Լույսի զինվորը ժամանակ առ ժամանակ հակամարտում է նրանց հետ, ում սիրում է: Իր բարեկամներին պաշտպանող մարդը չի երկնչում կյանքի փոթորիկներից, իր մեջ միշտ ուժ է գտնում` դժվարությունները հաղթահարելու և առաջ շարժվելու համար:

Բայց, ի դեպ, հաճախ պատահում է, որ մարդիկ, ում նա հույս ուներ սովորեցնել մարտարվեստը, իրեն մարտահրավեր են նետում:

Այնժամ լույսի զինվորը ցույց է տալիս, թե ինքն ինչի է ընդունակ և մի քանի հարվածով իր աշակերտի ձեռքից խլում է զենքը. թուրը գետին է տապալվում, և դարձյալ ներդաշնակություն է տիրում նրանց հանդիպման վայրում:

«Ինչո՞ւ ես դու, այդչափ գերազանցելով նրանց, այդպես անում», - հարցնում է նրան ճամփորդը:

«Երբ ինձ մարտահրավեր են նետում, դա իրականում նշանակում է, որ նրանք ինձ հետ խոսել են ուզում, ես էլ այդկերպ եմ նրանց հետ երկխոսություն վարում», - պատասխանում է զինվորը:

8

Լույսի զինվորը, մինչ մարտը սկսելը, որի արդյունքից շատ բան է կախված, իրեն հարց է տալիս. «Որքանո՞վ եմ ես կարողացել իմ մեջ հմտություն և ճարպկություն զարգացնել»:

Քանզի նա գիտե, որ իր վարած նախորդ ճակատամարտերից յուրաքանչյուրն իրեն ինչ-որ բան է սովորեցրել: Դրանով հանդերձ` իր քաղած դասերը ստիպել են նրան տառապել ավելի, քան պետք էր: Մի անգամ չէ, որ նա անիմաստ ժամանակ է վատնել` կեղծիքի համար պայքարելով: Մի անգամ չէ, որ հարկ է եղել տառապել նրա համար, ով արժանի չի եղել իր սիրուն:

Հաղթողներն անցյալում գործած սխալները չեն կրկնում:

Դրա համար էլ լույսի զինվորը վտանգում է իր սիրտը միայն նրա համար, ով արժանի է դրան:

9

Լույսի զինվորը հարգում է Ի. Ցզինի հիմնական դրույթը. «Հաստատակամությունն օգտակար է»:

Նա գիտե, որ պնդաճակատությունը ոչ մի ընդհանուր բան չունի հաստատակամության հետ: Քանզի լինում են ժամանակներ, երբ պայքարը, ձգվելով ավելին, քան անհրաժեշտ է, ուժերը սպառում է և ոգևորությունը՝ մարում:

Ահա այդ պահերին լույսի զինվորը հանգում է մի մտքի՝«Ձգձգվող պատերազմը վերջիվերջո ոչնչացնում է հերց իրեն՝ հաղթողին»:

Այդ ժամանակ նա հեռացնում է իր զորագնդերը մարտադաշտից, և ինքն իրեն հանգիստ տալիս: Նա համառ է իր կամքն իրագործելիս, ուստի և կարողանում է պահը որսալ ու նոր հարձակում ձեռնարկել:

Լույսի զինվորը միշտ վերսկսում է մարտը, բայց ոչ նրա համար, որ կամակոր է: Ո՛չ, նա նկատում է, որ ժամանակը փոխվել է:

10

Լույսի զինվորը գիտե, որ կյանքի որոշ պահեր կրկնվելու հատկություն ունեն: Հաճախ բախվում է դժվարությունների, որոնք մի անգամ արդեն հաղթահարել է, և հայտնվում է դժվարին իրավիճակում, որից արդեն պատվով դուրս է եկել, և սա խռովում է նրա հոգին. նրան թվում է՝ եթե ամեն ինչ կրկնվում է, ուրեմն ինքը դոփում է տեղում և այլևս ուժ չունի առաջ շարժվելու:

«Չէ՞ որ ես սա անցել եմ» - գանգատվում է նա իր սրտին:

«Անցել ես, - պատասխանում է նրան սիրտը, - բայց այդպես էլ չես յուրացրել»:

Եվ լույսի զինվորը գիտակցում է, որ ճակատագիրն իրեն փորձի կրկնություն է ուղարկում մեն մի նպատակով՝սովորեցնելու նրան այն, ինչ ինքը չի ուզեցել միանգամից յուրացնել:

11

Լույսի զինվորը համընդհանուր կանոններին միշտ հակառակ է գործում:

Նա կարող է աշխատանքի գնալիս փողոցի մեջտեղում պարել, ակնդետ նայել անծանոթի աչքերի մեջ, խոստովանել, որ առաջին հայացքից սիրահարվել է,

պաշտպանելու մի տեսակետ, որ անհեթեթ է թվում: Լույսի զինվորն իրեն թույլ է տալիս նման բաներ:

Անցած ցավերը հիշելիս նա անվարան արտասվում է, իսկ նոր հայտնագործությունների շեմին՝ պարզապես ցնծում: Երբ զգում է, որ հասել է պահը, նա ամեն ինչ մի կողմ է նետում և սլանում դեպի վտանգավոր ու այդքան ցանկալի ձեռնարկումը: Հասկանալով, որ հակառակվելու իր ընդունակություններն ուր որ է սպառվելու են, նա դուրս է գալիս կռվից և չի էլ մեղադրում իրեն, որ մի երկու անսպասելի խեթություն է թույլ տվել:

Լույսի զինվորն իր կյանքի օրերը երբեք չի ապրում ջանք թափելով կատարելու այն դերը, որ իր համար ուրիշներն են սահմանել:

12

Լույսի զինվորները ձգտում են, որ իրենց աչքերում փայլը չխամրի:

Նրանք այս աշխարհից են: Չեն օտարանում ուրիշ մարդկանց, նրանք ճանապարհ են ընկնում առանց ցուպի ու ոտնամանների: Նրանք հաճախ են ալեկոծվում վախից, միշտ չէ, որ ճիշտ են վարվում:

Նրանք տառապում են դատարկ բաներից, լինում են մանրախնդիր ու ճղճիմ, իսկ երբեմն էլ կարծում են, թե ընդունակ չեն աճելու:

Հաճախ նրանք համոզված են, որ արժանի չեն երջանկության ու հրաշքի:

Եվ միշտ չէ, որ վստահ են, թե հատկապես ինչ են անում իրենք այստեղ: Նրանք անքուն գիշերներ են անցկացնում՝ տառապելով, թե իրենց կյանքը զուրկ է իմաստից:

Ահա դրա համար էլ նրանք լույսի զինվորներ են: Որովհետև ընդունակ են սխալվելու: Որովհետև նրանք հարցադրումներով տանջում են իրենց: Որովհետև նրանք փնտրում են պատճառը, փնտրում են և, անկասկած, երբևէ գտնելու են:

13

Լույսի զինվորը չի վախենում խենթ երևալուց: Նա բարձրաձայն խոսում է ինքն իր հետ: Ինչ-որ մեկը ներշնչել է նրան, որ դա հրեշտակների հետ շփվելու լավագույն միջոցն է, և ահա ինքը համարձակվում է նրանց հետ կապի մեջ մտնել:

Սկզբից դա նրան դժվար գործ է թվում: Նա մտածում է, որ ինքը նրանց ասելու բան չունի, որ ինքը միայն դատարկաբանություններ ու հիմարություններ է կրկնելու: Բայց և այնպես լույսի զինվորը համառում ու պնդում է և ամեն օր զրույց վարում սեփական սրտի հետ: Ե՛վ բարձրաձայնում է այն, ինչի հետ համաձայն չէ, և՛ անհեթեթություններ է ասում:

Ու ահա մի գեղեցիկ օր էլ նա նկատում է, որ իր ձայնն այլ կերպ է հնչում: Այդժամ նա հասկանում է, որ ինքը բացել է բարձրագույն իմաստնության հասնելու դժվարին ճանապարհը:

Լույսի զինվորը հաճախ խենթ է թվում, բայց նա միայն ձևացնում է:

14

«Լույսի զինվորն ինքն է ընտրում իր թշնամուն»,-ասում է բանաստեղծը:

Զինվորը գիտե, թե ինքն ինչի է ընդունակ: Նա իր շնորհներն ու արած բարեգործությունները գովերգելու կարիքը չունի: Բայց ամեն պահի կարող է հայտնվել մեկը, ով ուզում է ապացուցել, թե ինքն ավելի լավն է:

Իսկ լույսի զինվորի համար «լավ» կամ «վատ» հասկացություններ չկան, որովհետև ամեն մարդ էլ բավարար օժտվածություն ունի, որ հետևի իր ընտրած ուղուն:

Բայց կան մարդիկ, ում դա չի բավարարում: Նրանք փորձում են գրգռել ու վիրավորել զինվորին, կռվի մեջ քաշել, անել ամեն ինչ, որ նրան հունից հանեն:

Այդ պահերին զինվորի սիրտն ասում է տիրոջը.«Բանի տեղ մի՛ դիր վիրավորանքները, դրանք քո ընդունակությունները չեն բազմապատկի: Դու միայն անտեղի քո ուժերը կկորցնես»:

Լույսի զինվորը ժամանակն աննպատակ չի վատնում՝ մարտահրավերն ընդունելով, քանզի գիտե՝ ինչ որ գրված է իր ճակատին, կկատարվի: (35էջ)

15

Լույսի զինվորը հիշում է Ջոն Բենիանի1 խոսքերը.«Չնայած ես անցել եմ այն ամենով, որով անցել եմ, ես չեմ զղջում, որ ընկել եմ այս կամ այն դժվարին իրավիճակի մեջ, քանզի հենց դրանք են ինձ բերել այնտեղ, որտեղ ես ուզել եմ հայտնվել: Այժմ ես ոչինչ չունեմ՝ բացի իմ այս թրից, և կհանձնեմ այն նրան, ով մտադիր է իրագործել իր ուխտագնացությունը: Ես ինձ հետ տանում եմ իմ վերքերն ու սպիները՝ հետքեր, որ ստացել եմ մարտերում: Դրանք և՛ ապացույցն են, որ ապրել եմ, և՛ պարգևներն են տիրածիս ու նվաճածիս համար:

Իմ սրտին հարազատ այս վերքերն ու սպիները իմ առջև մի օր բացելու են Դրախտի դռները: Եղել են ժամանակներ, երբ ես լսել եմ ուրիշների սխրագործությունների պատմությունները: Եղել են ժամանակներ էլ, երբ ես պարզապես ապրել եմ միայն, որովհետև պարտավոր էի ապրել:

Իսկ հիմա ապրում եմ, որովհետև զինվոր եմ, որովհետև ուզում եմ երբևէ կանգնել Նրա առաջ, ում համար այսքան պայքարել եմ»:(36էջ)

1.Բենիան Ջոն (1628-1688), անգլիացի պուրիտան-գրող, «Ուխտագնացի ուղին» վեպի հեղինակ:

16

Այն պահից, ինչ լույսի զինվորն իր առաջին քայլն է անում, սկսում է ճանաչել իր առջև փռված ուղին: Ամեն մի քար, ճանապարհի ամեն ոլորան ողջունում է նրան: Նա զգում է իր և լեռների ու աղբյուրների միջև արնակցական կապը, զգում է, որ իր հոգու մի մասը ամփոփված է թփերի ու խոտերի, գազանների ու թռչունների մեջ:

Այդժամ, ընդունելով Աստծո օգնությունն ու աստվածային խորհուրդը, նա թողնում է որ իր Ուղին տանի իրեն այնտեղ, ուր կյանքի առաջադրած խնդիրների լուծումներն են:

Պատահում է, որ նա գիշերելու տեղ չի ունենում, պատահում է՝ տանջում է անքնությունը: ‹‹Ոչինչ,-մտածում է զինվորը,-սա մտնում է իմ մասնագիտության մեջ: Չէ՞ որ ինձ ոչ ոք չի պարտադրել գնալ այս ճանապարհով: Ես ինքս եմ այդպես որոշել»:

Այս խոսքերի մեջ է ամփոփված նրա ողջ հզորությունը: Նա ինքն է ընտրել իր ուղին և ոչ մեկի առաջ չի տրտնջում ու չի բողոքում ոչ մեկին: (38էջ)

17

Կգա ժամանակը՝ մի քանի հարյուր տարի հետո, երբ ողջ Տիեզերքը օգնության կհասնի լույսի զինվորներին և խուլ ու անտարբեր կմնա նրանց հանդեպ, ովքեր չեն ձերբազատվել նախապաշարումներից:

Հողի էներգիան թարմացվելու կարիք ունի: Նոր գաղափարները տարածության կարիք ունեն: Մարմինն ու հոգին նոր կոչերի կարիք ունեն:

Ապագան վերածվում է ներկայի, և երազանքները, բացի նրանցից, որ իրենց մեջ նախապաշարումներ են քողարկում, հնարավորություն են ստանում իրականանալու:

Կարևորը կմնա, անօգուտը կչքվի: Լույսի զինվորը, սակայն, իրեն նեղություն չի տալիս՝ մտածելու իր մերձավորների երազների մասին և գնահատելու դրանք: Նա ժամանակ չի կորցնի ուրիշների կայացրած որոշումները կշտամբելու վրա:

Քանզի, որպեսզի դավանես քո ընտրած ուղին, բոլորովին կարիք չկա ապացուցելու, որ մի ուրիշը ճիշտ ճամապարհ չի ընտրել:(39էջ)

18

Լույսի զինվորը մեծագույն ջանասիրությամբ է ուսումնասիրում այն, ինչը մտադիր է նվաճելու:

Որքան էլ դժվարին լինի նպատակին հասնելու ճանապարհը, արգելքները հաղթահարելու համար միշտ էլ ձևեր ու հնարներ կգտնվեն: Զինվորը շրջանցելու ուղիներ է փնտրում, սրում իր թուրը, ջանում է այնպես անել, որ հոգին լցվի ամրությամբ, առանց ինչի անհնար է արժանապատվորեն մարտահրավերն ընդունել:

Բայց ահա, այդ ուղով արդեն ընթանալիս զինվորը գիտակցում է, որ կան դժվարություններ ու խոչընդոտներ էլ, որոնք ինքը հաշվի չէր առել:

Եթե նա որոշի սպասել ավելի բարեպատեհ պահի, ապա երբեք չի շարժվի տեղից: Առաջին քայլն անելու համար խենթության մի ծվեն է հարկավոր:

Լույսի զինվորը կարողանում է այդ խեթությունն իրեն ծառայեցնել: Սակայն ամեն ինչ կանխատեսել հնարավոր չէ, հատկապես պատերազմում, հատկապես սիրո մեջ:(40էջ)

19

Լույսի զինվորը գիտի իր թույլ կողմերը, բայց և գիտի՝ ինչով է օժտված: Ուրիշները գանգատվում են. «Մեզ հնարավորություն չի տրվել»:

Գուցե նրանք ճիշտ են, բայց զինվորը երբեք իրեն թույլ չի տա զգոնությունը կորցնել դրա պատճառով, ո՛չ, նա մինչև վերջ կլարի իր ողջ ուժերն ու տաղանդը:

Նա գիտե, որ եղնիկն ուժեղ է իր ոտքերի արագությամբ, իսկ ճայը՝ թե ինչ սրատեսությամբ է ձուկ հայտնաբերում և որքան դիպուկ դուրս քաշում ջրից: Զինվորը գիտե, որ վագրը չի վախենում բորենուց, քանզի վստահ է, որ հզոր է:

Այդժամ լույսի զինվորը ձգտում է հասկանալ՝ ինչն իրեն հաջողություն կբերի: Նա ստուգում է իր զինանոցը, իսկ դա ներառում է երեք բան՝ հույս, հավատ և սեր:

Եթե թե՛ առաջինը, թե՛ երկրորդը և թե՛ երրորդը տեղում են, լույսի զինվորն անվարան շարունակում է ճանապարհը: (41էջ)

20

Լույսի զինվորը գիտե, որ ոչ մեկին չի կարելի հիմար համարել, և որ կյանքը կդաստիարակի ցանկացած մեկին, եթե նույնիսկ դրա համար ժամանակ պահանջվի:

Զինվորը տալիս է իր մեջ եղած ամենալավը, և նույնն էլ սպասում է ուրիշներից: Եվ ի լրումն դրա՝ նա ջանում է մեծահոգաբար ու շռայլորեն ցույց տալ ամբողջ աշխարհին, թե ամեն մարդ ինչքան ավելիին է ընդունակ:

«Մարդիկ անշնորհակալ են»,- այդ առիթով նկատում են նրա մյուս ընկերները: Լույսի զինվորին այսպիսի խոսքերով չես շփոթեցնի:

Նա շարունակում է խրախուսել իր մերձավորներին և մղել նրանց գործողության, քանզի այդպես նա ներգործում է նաև իր վրա:(42էջ)

21

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ կռվից առաջ ճաշակել է վախի զգացումը:

Ամեն մի լույսի զինվոր էլ պատահել է՝ անցյալում ստել ու դավաճանել է:

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ տքնել է ոչ իր ճանապարհի վրա:

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ տառապում է չնչին մանրուքների պատճառով:

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ եզրակարել է, որ ինքը բոլորովին էլ լույսի զինվոր չէ:

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ զոհաբերել է իր հոգու պարտքը:

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ «այո» է ասել, երբ ուզել է իրականում «ոչ» ասել:

Ամեն մի լույսի զինվոր էլ, պատահել է՝ վերք է հասցրել նրան, ում սիրում է:

Ահա դրա համար էլ նա իրավունք ունի լույսի զինվոր կոչվելու, որովհետև անցել է այս ամենով և երբեք հույսը չի կորցրել ավելի լավը դառնալու, քան կա:(44էջ)

22

Լույսի զինվորը հիշում է հին ժամանակներում ապրած որոշ մտածողների խոսքերից, որոնցից մեկն էլ Թոմաս Հենրի Հեքսլին [1] է: «Մեր ձեռնարկած գործողությունների հետևանքները ցնցող են վախկոտների համար, բայց իմաստունների համար դրանք ասես լույսի շող լինեն: Աշխարհը նման է շախմատային տախտակի: Խաղաքարերը մեր ամենօրյա արարքներն են, խաղի կանոնները՝ այսպես կոչված, բնության օրենքները: Մենք չենք կարող տեսնել Նրան, ում հետ խաղում ենք, բայց մեզ հայտնի է. նա արդարամիտ է, համբերատար, վեհանձն»:

Զինվորը դեռ պիտի ընդունի իրեն նետված մարտահրավերը: Նա գիտե, որ Աստված բաց չի թողնի նրանց սխալներից ոչ մեկը, ում սիրում է և թույլ չի տա, որ իր սիրելիները ձևացնեն, թե իբր չգիտեն խաղի կանոնները:

23

Լույսի զինվորը չի փոխում իր որոշումները: Մինչ մի գործ ձեռնարկելը՝ նա տրվում է երկարատև մտորումների, ծանրութեթև անում իր պատրաստականության աստիճանը, պատասխանատվության չափը, իր պարտքը ուսուցչի առաջ:

Պահպանելով իր հոգեկան հավասարակշռությունը՝ նա ջանասիրաբար ուսումնասիրում է իր ամեն մի քայլն այնպես, կարծես ամեն ինչ կախված է դրանից:

Եվ այն պահին, երբ որոշումն արդեն ընդունված է, նա, առանց հետ նայելու, շարժվում է առաջ: Նա չի կասկածում իր ընտրած ուղու ճշմարտացիությանը, և եթե անգամ հանգամանքներն այնպիսին չեն, ինչպես ինքն էր պատկերացնում, լույսի զինվորը չի դառնում իր ընտրած ճանապարհից:

Եթե որոշումը ճիշտ է լինում, նա շահում է մարտը, եթե անգամ այն ավելի երկար է տևում, քան առաջ ենթադրվում էր: Իսկ եթե որոշումը սխալ է լինում, նա պարտվում է, և ստիպված է լինում ամեն ինչ սկսել նորից՝ բայց արդեն հաշվի առնելով դառը փորձը:

Լույսի զինվորը, մեկ որ սկսեց, գնում է մինչև վերջ:

24

Լույսի զինվորը գիտե, որ ամենալավ ուսուցիչները նրանք են, ում հետ ինքը ռազմի դաշտ է ելնում:

Վտանգավոր է խորհուրդ հարցնելը: Հարյուր անգամ ավելի վտանգավոր է խորհուրդ տալը: Երբ զինվորն օգնության կարիք է ունենում, նա նախ և առաջ ջանում է հասկանալ, թե իր ընկերներն իրենց ինչպես են պահում դժվարին իրավիճակներում, ինչպես են գործում կամ ինչու չեն գործում:

Իրեն ոգևորող ներշնչանքը փնտրելով՝ նա իր կողքին կանգնածի շուրթերից կռահում է բառերը, որ նրա պահապան-հրեշտակն է շշնջում:

Հոգնելիս կամ մենակ մնալիս նա ոչ թե մտքով սլանում է դեպի հեռավոր կանայք ու տղամարդիկ, այլ փնտրում է նրանց, ովքեր մոտերքում են, հենց նրանց էլ

պատմում է իր թախիծն ու նրանցից զուրգուրանք ակնկալում՝ վայելումով ու առանց տանջելու իրեն մեղքի զգացումով:

Զինվորը գիտե. տիեզերքի ամենահեռավոր աստղն իր գոյությունն է հայտնաբերում ամենի մեջ, ինչ իրեն շրջապատում է:

25

Լույսի զինվորն իր աշխարհ թողնում է այն մարդկանց, ում սիրում է:

Նա ձգտում է ոգևորել ընկերներին գնալու այնպիսի արարքների, որոնք կատարել նրանք կուզեին, բայց չեն համարձակվում:

Այդպիսի պահերին հայտնվում է Թշնամին՝ քարետախտակները ձեռքին:

Դրանցից մեկի վրա գրված է. «Առաջին հերթին մտածիր քո մասին: Քո բաժին հաջողությունները նախ և առաջ քեզ համար պահիր, թե չէ վերջիվերջո ամեն ինչ կկորցնես»:

Իսկ ահա մյուսի վրա զինվորը կարդում է.«Ո՞վ ես դու, որ օգնես մյուսներին: Մի՞թե դու ընդունակ չես տեսնելու սեփական արատներդ»:

Զինվորը գիտե, որ զուրկ չէ թուլություններից ու թերություններից: Բայց գիտե նաև, որ չի կարող առանձնանալ իր ընկերներից և մենակ աճել:

Այդժամ զինվորը, չնայած համամիտ է, որ դրանց վրա փորագրվածը զուրկ չէ ասելիքից, գետնին է զարկում քարետախտակները և ջարդուփշուր անում: Իսկ ինքը շարունակում է մերձավորներին ոգևորել:

26

Մեծ մտածող Լաո Ցզին այսպես է խորհում զինվորի անցնելիք ճանապարհի մասին. «Ճանապարհին իր մեջ հարգանք է ներառում ամեն փոքրի ու փխրունի հանդեպ: Միշտ ձգտիր որսալ այն պահը, երբ պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել:

Եթե անգամ փայլուն տիրապետում ես նետաձգության արվեստին, միևնույն է, ուշադիր եղիր նետը տեղադրելիս, աղեղը ձգելիս:

Իր անելիքները հստակ իմացողոր նորեկը, վերջին հաշվով, ավելի խելացի է դուրս գալիս, քան ցրված իմաստունը:

Ինքդ քեզ սիրո վրա կենտրոնացնելը երջանկություն է նշանակում, իսկ ատելության վրա կենտրոնանալը ցնցում է քեզ: Ով չի կարողանում դժվարությունները ճանաչել, նա դուռը բաց է թողնում՝ դրանով իսկ աղետ ծնելով::

Մարտը ոչ մի ընդհանուր բան չունի տուրուդմփոցի հետ»:

[1] Հեքսլի Թոմաս Հենրի (1825-1895), անգլիացի կենսաբան, փիլիսոփա:

27

Լույսի զինվորը տրվում է մեդիտացիայի (մտահայեցողության): Նա նստում է իր վրանի այն անկյունում, որտեղ աղմուկ չի թափանցում և տրվում աստվածային լույսին: Միաժամանակ նա ջանում է ոչնչի մասին չմտածել. մտովի հեռանում է հաճույքների փնտրտուքից, իրեն նետված բոլոր մարտահրավերներից ու բացահայտումներից՝ թողնելով, որ արտահայտվեն իր շնորհներն ու ուժերը: Եթե անգամ հենց այդ պահին նա չզգա դրանց առկայությունը, միևնույն է, դրանք կազդեն իր կյանքի վրա, կգործեն առօրյա կենցաղում:

Զինվորը, մինչ զբաղված է մեդիտացիայով, այլևս այն չէ, ինչ եղել է նախկինում. այժմ նա հսկում է Աշխարհի Հոգուն: Հենց այս պահերն են օգնում զինվորին՝ հասնելու իր ուսերին դրված պատասխանատվության աստիճանին և գործելու դրան համաձայն:

Լույսի զինվորը գիտե, որ այնտեղ՝ իր սրտի խորքում իրեն ուղղորդող ինչ-որ կարգ գոյություն ունի:

28

Զրույցի համար հատկացված ժամին Հերրիգելն ասում է իր խորհրդատուին. «Երբ ես քաշում եմ աղեղը, այնպիսի մի պահ է գալիս, որ պարզ է դառնում՝ եթե հենց հիմա նետը բաց չթողնեմ, կկորցնեմ վճռականությունս»:

«Մինչև դու չդադարեցնես մտովի արագացնել նետը ձգելու պահը, դու նետաձգության արվեստին չես տիրապետի,-պատասխանում է խորհրդատուն: - Պահ է լինում, որ վրիպումը բացատրվում է նետի արձակման ժամանակ նետաձիգի չափից ավելի տենդոտ և կրակոտ լինելով»:

Լույսի զինվորը երբեմն մտածում է. «Այն, ինչ չեմ արել, էլ երբեք չի արվի»:

Բայց դա այնքան էլ այդպես չէ. նա պետք է գործի և համբերատար սպասի, որ անհրաժեշտ պահին Տիեզերքն էլ սկսի գործել:

29

Լույսի զինվորը, իր նկատմամբ որևէ անարդարություն ճաշակելով, փորձում է առանձնանալ, որպեսզի ոչ ոք չտեսնի իր տառապանքը:

Դա և՛ լավ է, և՛ վատ:

Քանզի մի բան է թույլատրել սրտին, որ սա բուժի իրեն հասցված վերքերը, մի այլ բան՝ ամբողջ օրն անցկացնել խորը մտածմունքների մեջ՝ վախենալով ուրիշների առաջ ցուցադրել սեփական թուլությունը:

Մեզանից յուրաքանչյուրի մեջ ապրում է և՛ հրեշտակը, և՛ դևը, ու նրանց ձայները երբեմն հնարավոր չէ զանազանել: Եվ երբ մենք հայտնվում ենք դժվարին իրավիճակում, մեր մեջ նստած դևը, արձագանքում է այն զրույցին, որ վարում ենք ինքներս մեզ հետ, քանզի ձգտում է ցույց տալ, թե ինչքա՜ն խոցելի ու անօգնական ենք մենք: Մեր մեջ նստած հրեշտակն էլ պարտադրում է մեզ մտածել մեր գործած արարքների մասին, և նրան երբեմն շուրթեր են պետք, որպեսզի արտահայտվի:

Զինվորը կարողանում է հավասարակշռություն պահպանել մենակության ու կախվածության միջև:

30

Լույսի զինվորը չի կարող յոլա գնալ առանց սիրո: Ջերմություն ու քնքշանք պարգևելու պահանջմունքը տրված է նրան բնությունից, ինչպես ուտելու ու խմելու

պահանջմունքը, ինչպես արդար կռվից ստացած հաճույքը: Եթե արևը մայր է մտնում, և զինվորը դեռ երջանկություն չի ճաշակել, նշանակում է՝ ինչ-որ բան ճիշտ չէ:

Այդժամ նա ընդհատում է մարտը և ճանապարհի ընկնում իր համար ուղեկից փնտրելու, որպեսզի երբ գիշերը գա, ինքը մենակ չլինի:

Երբ նրան չի հաջողվում ուղեկից գտնել, նա հարցնում է իրեն.«Մի՞թե ես վախենում եմ մոտենալ ինչ-որ մեկին: Կամ գուցե ես ստացել եմ ջերմություն ու քնքշանք, բայց չեմ նկատել այն»:

Լույսի զինվորը օգտվում է մենակությունից, բայց թույլ չի տալիս, որ մենակությունն օգտվի իրենից:

31

Լույսի զինվորը գիտե, որ հնարավոր չէ ապրել կատարյալ լիցքաթափ վիճակում:

Նա նման է այն նետաձիգին, ով որպեսզի խփի հեռու նշանակետին, պիտի ձգի իր աղեղը: Նա սովորում է աստղից, որի փայլը նկատում ենք միայն, երբ պայթում է:

Նա նկատում է, որ նժույգը խոչընդոտները, հաղթահարելիս, լարում է իր բոլոր մկանները:

Բայց նա կարողանում է զանազանել լարվածությունն անտեղի շտապողականությունից, և մեկը մյուսի հետ երբեք չի շփոթում:

32

Լույսի զինվորը Անդրդվելիության և Գթասրտության միջև միշտ հասնում է հավասարակշռության:

Որպեսզի երազանքն իրականություն դառնա, կամքը պիտի ամուր ու հզոր լինի, և նպատակին հասնելիս պետք է հիշել, որ դեպի երազանքը տանող ճանապարհը իրականում ամեննին էլ միշտ չէ, որ նման է մեր պատկերացրածին:

Դրա համար էլ լույսի զինվորը կարողանում է և՛ հրամայել, և՛ կարեկցել: Աստված երբեք չի լքում Իր զավակներին, բայց անքննելի են Նրա նախասահմանած ուղիները, և այն, ինչ Նա պատրաստել է մեզ համար, մեր իսկ սեփական քայլերով է հարթվում: Տիրելու ինչպես նաև ենթարկվելու կարողությունը ոգևորում է զինվորին: Արմատացած սովորությունը չի կարող տարանջատել կարևոր խնդիրները:

33

Լույսի զինվորը երբեմն նման է իր ճանապարհին արգելքներ շրջանցող հոսանուտ ջրի: Պատահում է, որ դիմադրությունը անխուսափելի կորստի կբերի. այդ դեպքում զինվորը հարմարվում է հանգամանքներին: Անտրտունջ, առանց զանգատի նա քայլում է լեռնոտ կիրճով ոլորվող քարքարոտ արահետներով:

Նրա ուժը նման է ջրի ուժին, քանզի դեռ ոչ ոչ ոք չի կարողացել ջարդել ջուրը մուրճով, կամ խոցել այն դաշույնով: Աշխարհի ամենահզոր թուրն անգամ ի վիճակի չէ նրա մակերևույթի վրա սպի թողնելու:

Գետի ջրերը հարմարվում են ճանապարհի հնարավորություններին ու առանձնահատկություններին, բայց միշտ հիշում են իրենց գլխավոր նպատակի՝ ծովի մասին: Բարակ առվակը աստիճանաբար հզորանում է՝ այլ գետերի հանդիպելով:

Եվ ահա գալիս է այն պահը, երբ ջրի հզորությունը դառնում է անհաղթահարելի: (60էջ)

34

Լույսի զինվորի համար վերացական հասկացություններ գոյություն չունեն:

Ամեն ինչ իրական է ու ստույգ, և ամեն ինչ նրան հարգանք է ներշնչում: Լույսի զինվորը հանգիստ չի նստում իր ստվերոտ վրանում ու կողքից հետևում, թե ինչ է կատարվում աշխարհում, ո՛չ, նա ընդունում է աշխարհի բոլոր մարտահրավերները՝ դրանց մեջ տեսնելով սեփական կերպարանափոխության հնարավորությունը:

Նրա ընկերներից ոմանք կա՛մ ամբողջ կյանքում զանգատվում են, որ զրկված են ընտրելու հնարավորությունից, կա՛մ շարունակ քննարկում են ուրիշների կայացրած որոշումները: Լույսի զինվորը իր միտքը գործի է վերածում:

Պատահում է, որ զինվորն իր համար ճիշտ նպատակ չի սահմանում: Այդժամ առանց զանգատվելու ու տրտնջալու՝ նա հատուցում է իր սխալի համար: Պատահում է և այնպես, որ նա շեղվում է ուղուց, այդժամ էլ նա երկար թափառում է, մինչև դարձյալ դուրս գա այն ուղին, որը նրան սկզբից տանում էր:

Բայց իր ընտրած ճանապարհից լույսի զինվորը երբեք չի նահանջում: (61էջ)

35

Լույսի զինվորը ապառաժի նման է :

Եթե նա կանգնած է հարթավայրում, և շուրջն ամեն ինչ ներդաշնակ է, նա աներեր է մնում: Մարդիկ կարող են իրենց տունը կանգնեցնել նրա՝ ավերիչ փոթորիկներից պաշտպանություն տարածող խոտի վրա:

Իսկ եթե ճակատագիրը հաճի նրան ծերպին կամ թեք լանջին կանգնեցնել, իսկ շրջապատը զուրկ լինի հավասարակշռությունից ու հարգանքից, այդ դեպքում նա ի հայտ կբերի իր ուժն ու կնետվի անդորրը խաթարել հանդգնած թշնամու վրա:

Այդ պահերին լույսի զինվորը կործանարար է ու մահաբեր, և ոչ ոք չի կարող նրան ետ պահել:

Լույսի զինվորը մտածում է միաժամանակ և՛ պատերազմի, և՛ խաղաղության մասին ու կարողանում է գործել հանգամանքներին համապատասխան: (62 էջ)

36

Լույսի զինվորը, ով չափազանց վստահ է իր մտքի սրության վրա, վերջիվերջո, անշուշտ, կթերագնահատի հակառակորդի ուժը:

Չպետք է մոռանալ. հաճախ հզորությունը ճկուն խորամանկությունից անգամ ավելի գործուն է:

Քառորդ ժամ է տևում ցլամարտը. շատ շուտով ցուլը հասկանում է, թե ինչպես են իրեն խաբում, և նրա հաջորդ քայլը ամբողջ թափով տորերոյի վրա հարձակվելն է: Եվ երբ դա կատարվում է, ոչ շուքը, ոչ խելքը, ոչ փաստարկի համոզչությունը, ոչ այն, որ «հմայք» է կոչվում, չեն կարող օգնել աղետի առաջն առնելուն:

Դրա համար էլ լույսի զինվորը ըստ արժանվույն է գնահատում իր առաջ ծառացած կոպիտ ուժը: Երբ կատաղությունը վերածվում է վայրագության, նա հեռանում է ռազմի դաշտից՝ սպասելու՝ մինչև ինքն իրեն մարի այդ անզուսպ պոռթկումը: (64էջ)

37

Լույսի զինվորը գիտե ճանաչել այն հակառակորդին, ով ուժեղ է իրենից:

Նա հասկանում է, որ եթե որոշի դեմառդեմ հանդիպել նրան, անմիջապես կոչնչացվի: Եթե տրվի նրա խորամանկությանը, թակարդը կընկնի:

Դրա համար էլ, որպեսզի դուրս գա դժվարին իրավիճակից, նա գործադրում է «դիվանագիտություն» կոչված այլ մեթոդներ: Եթե հակառակորդն իրեն անմիտ երեխայի պես է պահում, ինքն էլ է այդպես վարվում: Եթե նա իրեն մարտի է կանչում, զինվորը անհասկացողի տեղ է դնում իրեն:

«Նա վախեցավ», - ասում են ընկերները:

Բայց զինվորը նրանց կարծիքների հետ գործ չունի, քանզի գիտե՝ թռչնակի խիզախությունն ու կատաղիությունը նրան չեն փրկի կատվի ճանկերից:

Այդպիսի իրավիճակներում զինվորը լցվում է համբերությամբ. թշնամին ավելի շուտ կգնա այլ որս փնտրելու, քան իր հետ բաց ձեռնամարտի մեջ կմտնի: (65էջ)

38

Լույսի զինվորը չի կարող անտարբեր լինել անարդարության հանդեպ:

Նա գիտե. աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է ու միասնական, դրա համար էլ մեկ առանձին մարդու ցանկացած գործողություն անդրադառնում է բոլոր մարդկանց վրա, ինչքան էլ որ շատ լինեն նրանք երկրագնդի վրա: Ուստի, տեսնելով ուրիշի տառապանքը, լույսի զինվորը մերկացնում է իր թուրը, որպեսզի ամեն ինչ, ըստ կարգի, դնի իր տեղը:

Բայց պայքարելով կեղեքումի դեմ՝ նա երբեք չի դատապարտում կեղեքողին, քանզի հիշում է, որ Աստծո առաջ ամեն մեկն ինքն է պատասխանատու իր արարքների համար: Իրագործելով իրեն բաժին ընկած պարտականությունը՝ զինվորը խուսափում է ամեն տեսակ դատողությունից:

Լույսի զինվորն այս աշխարհ է եկել, որ օգնի իր եղբայրներին, ոչ թե դատի մերձավորին: (66 էջ)

39

Լույսի զինվորը վախի զգացում երբեք չի ունենում: Փախուստը պաշտպանության համար կարող է գերազանց միջոց լինել, բայց այդ միջոցը չի կարելի գործածել, եթե դու վախով ես համակված: Ընտրության առաջ հայտնվելով՝ զինվորը կնախընտրի պարտություն կրել, ապա բուժել ստացած վերքերը, քան փախուստի դիմել և դրանով զավթիչին շատ բան և հզորությամբ չվաստակածը մատուցել: Դառն ու դժվարին պահերին, երբ իրավիճակը հաղթանակ չի խոստանում, զինվորն իրեն հնազանդ ու անվեհեր է պահում, այսինքն՝ հերոսաբար: (68էջ)

40

Լույսի զինվորը երբեք չի շտապում: Ժամանակը նրա օգտին է աշխատում, և նա, դա գիտենալով, սովորում է զսպել անհամբերությունը և խուսափել չմտածված արարքներից:

Նրա քայլը անշտապ է ու հաստատուն: Նրան հայտնի է, որ գալու է մարդկության պատմության համար ճակատագրական պահը, և նախքան աշխարհի վերափոխելը, հարկ կա իրեն փոխելու: Դրա համար էլ նա կրկնում է Լանսա դել Վաստոյի խոսքերը. «Հայտնի է, թե հեղաշրջմանը որքան ժամանակ է հարկավոր, որ կայունանա»:

Զինվորը չհասունացած պտուղը երբեք չի քաղի: (69էջ)

41.

Լույսի զինվորը պետք է լինի միաժամանակ և՛ համբերատար, և՛ ճարպիկ:

Ստրատեգիական երկու գլխավոր սխալ կա. շտապելը՝ նպաստավոր պահից առաջ գործելով, և դանդաղելը՝ պահը կորցնելով:

Դրա համար էլ, որպեսզի խուսափի թե՛ մեկից և թե՛ մյուսից, զինվորը ամեն դեպք դիտարկում է որպես եզակի իր տեսակի մեջ և չի օգտվում ուրիշի կարծիքից, ընդհանուր ձևակերպումներից և պատրաստի դեղատոմսերից:

Մոաուլյատ կրոնապետը Օմար բեն Ալ-Ասսին հարցրեց, թե որն է նրա քաղաքական անօրինակ հաջողությունների գաղտնիքը:

«Առանց նահանջի ճանապարհը նախապես ուսումնասիրելու՝ երբեք գործի մեջ չեմ մտել, - պատասխանեց վերջինս - բայց որ մտել եմ, էլ երբեք չեմ ձգտել տեղնուտեղը գլխապատառ փախչել»:

42

Լույսի զինվորին ծանոթ է ընկճվածությունը: Երբեմն նրան թվում է, թե ինքը իր հոգում ցանկալի զգացումներ արթնացնելու համար ուժ չունի:

Բազում օրեր ու գիշերներ նա հարկադրված տանջալից վիճակում է, և ոչ մի նոր իրադարձություն չի կարող վերադարձնել նրան անցած ոգևորությունը:

«Նրա պայքարն ավարտված է», - ասում են բարեկամները:

Այդպիսի խոսքերը ցավ ու ամոթ են պատճառում զինվորին, քանզի նա գիտե, որ դեռ չի հասել նպատակին, որին ձգտում էր: Սակայն նա համառ է, ու գործի կեսից ետ չի կանգնի:

Եվ ահա այն պահին, երբ ինքն ամենաքիչն է դրան սպասում, նրա առջև նոր դուռ է բացվում:

43

Լույսի զինվորը ջանում է, որ ատելության զգացումը երբեք չաղտոտի իր սիրտը:

Կռվի մեկնելիս նա հիշում է Քրիստոսի խոսքերը՝ սիրի՛ր թշնամուդ, և հնազանդվում այդ պատգամին:

Բայց նա գիտե, որ թողությունը բոլորովին էլ համարժեք չէ ամենաթողությանը: Գիտե, որ զինվորը չպիտի խոնարհի գլուխը, քանզի այդ դեպքում նա տեսադաշտից կկորցնի իր երազանքների հորիզոնը:

Նա պատրաստ է ընդունելու , որ թշնամիները իր խիզախությունը, իր համառությունը, որոշումներ կայացնելու իր ունակությունը փորձության ենթարկելու համար են: Թշնամիները պարտադրում են նրան պայքարել հանուն իր երազանքների իրականացման:

Կռվի դաշտում ձեռք բերած փորձառությունը ամրացնում է լույսի զինվորի ոգին:

44

Լույսի զինվորը հիշում է անցյալը: Նրան հայտնի է՝ ինչ ասել է Հոգևոր որոնում , որի շնորհիվ էլ մարդկության պատմության մեջ գրվել են դրա ամենափառավոր էջերից որոշները:

Ամենափառավորներից, բայց և ամենազարշելիներից՝ խավարամոլությունը, զոհաբերությունը, արյունալի հաշվեհարդարները:

Մարդիկ Հոգևոր որոնումն օգտագործել են ամենատարբեր նպատակներով, և զինվորը գիտե, թե որքան հաճախ են իր իդեալները հրեշավոր մտադրությունների քողարկման միջոց ծառայել:

Արդեն քանի անգամ է զինվորը առիթ ունեցել լսելու արտահայտություններ, ինչպես՝ «Ի՞նչ իմանամ, որ այս ճանապարհը դեպի ճշմարտություն է տանում»: Քանի անգամ է նա առիթ ունեցել տեսնելու մարդկանց, ովքեր, այդ հարցի պատասխանը չստանալով, հրաժարվել են Հոգևոր որոնումից:

Բայց զինվորը կասկած չունի, քանզի նա առաջնորդվում է ստույգ ու ճշգրիտ բանաձևով:

«Ծառը պտղիցն են ճանաչում», - ասել է Հիսուսը: Զինվորը հետևում է այս կանոնին և երբեք չի սխալվում:

45

Լույսի զինվորը գիտե, թե որքան կարևոր բան է ներզգացումը: Կռվի ամենաթեժ պահին, երբ ժամանակ չկա մտածելու, թե ինչպես պետք է հակահարված տալ հակառակորդին, զինվորը գործում է ներզգացմամբ և հնազանդվում իր պահապան հրեշտակի խոսքերին:

Խաղաղության ժամանակ նա գուշակում է Աստծո կողմից իրեն ուղարկված նշանների իմաստը:

«Խելագար է », - ասում են ոմանք նրա մասին:

«Երկնային ամրոցներ է կառուցում», - ասում են մյուսները:

«Ինչպես կարելի է վստահել մի բանի, որ զուրկ է տրամաբանությունից», - տարակուսում են երրորդները:

Բայց զինվորը գիտե՝ ներզգացումը այբուբեն է, որի օգնությամբ կարելի է կարդալ Աստծո կողմից նախասահմանվածը, ուստի նա շարունակում է ականջ դնել քամու ձայնին և զրուցել աստղերի հետ:

46

Լույսի զինվորն իր ընկերների հետ նստում է խարույկի շուրջ:

Նրանք պատմում են իրենց տարած հաղթանակների մասին և ուրախությամբ ընդունում խարույկին մոտեցող օտարականներին, քանզի նրանցից յուրաքանչյուրը հպարտանում է սեփական կյանքով ու Արդար Կռվում իր մասնակցությամբ: Զինվորը ոգևորությամբ խոսում է իր անցած ուղու մասին, պատմում՝ ինչպես է ընդունել այս կամ այն մարտահրավերը, ինչպես է արձագանքել դրան, ինչ որոշում է հասունացել իր մեջ այս կան այն դժվար պահին: Երբ նա պատմում է այդ մասին, նրա խոսքերը ներծծված են ռոմանտիզմով ու կիրք են շնչում:

Երբեմն նա իրեն մի քիչ չափազանցություն է թույլ տալիս: Նա հիշում է, որ իր նախնիներն էլ ժամանակ առ ժամանակ նման բան իրենց թույլ են տվել:

Այդ պատճառով էլ նա դրա մեջ մեծ մեղք չի տեսնում: Բայց նա երբեք հպարտությունը փառասիրության հետ չի շփոթում և ինքն էլ չի հավատում իր հորինածին:

47

Լույսի զինվորը ժամանակ առ ժամանակ լսում է. «Այո՛, մինչ որոշում ընդունելը ես պետք է ամեն ինչ հասկանամ: Ես ուզում եմ ունենալ իմ որոշումները փոխելու ազատությունը»:

Զինվորը տարակուսանքով է ընկալում այդպիսի խոսքերը: Ինքն էլ կարող է տիրապետել այդպիսի ազատության, բայց դա երբեք չի խանգարում նրա՝ իր ինչ-ինչ պարտականությունները կատարելուն, չնայած ինքն այդքան էլ հստակ չի գիտակցում, թե ինչու է այդպես գործում:

Լույսի զինվորը որոշումներ է կայացնում: Նրա հոգին ազատ է, ինչպես ամպերը երկնքում, բայց ինքը կաշկանդված է իր երազանքով: Սեփական կամքով ընտրած իր ճանապարհին, պատահում է՝ իրեն գտնում է տհաճ մի պահում, ստիպված է լինում խոսել մարդկանց հետ, ովքեր դույզն-ինչ չեն հարստացնում իր գիտելիքները: Երբեմն ստիպված է անգամ զոհողության գնալ:

«Դու ազատ չես»,-ասում են նրան բարեկամները:

Զինվորն ազատ է: Նա պարզապես գիտե, որ դուռը բաց վառարանում հաց չեն թխում:

48

Միշտ հիշի՛ր. ինչով էլ որ զբաղված լինես, ինչ էլ որ անելիս լինես, հարկավոր է սպասել նպատակներին հասնելու միջոցներին և քո առջև ծառացած խնդրի լուծման հնարավորությանը: «Պտուղը մերժում է միայն նա, ով, բավարար չափով պատրաստված լինելով, ամենափոքր ցանկությունն անգամ չունի հաղթանակի արդյունքներից օգտվելու և մարտի ժամանակ խորասուզված է սեփական մտածմունքներում: Կարելի է մերժել պտուղը, բայց այդ մերժումը չի նշանակում անտարբերություն արդյունքի նկատմամբ»:

Լույսի զինվորը հարգանքով է վերաբերվում Գանդիի այս խրատներին: Նա թույլ չի տալիս, որ իրեն մոլորեցնեն մարդիկ, ովքեր, ուժ չունենալով որևէ արդյունքի հասնելու, աղաղակում են դրանից հրաժարվելու մասին:

49

Լույսի զինվորը ուշադիր է մանրուքների նկատմամբ, քանզի գիտե, որ դրանք ընդունակ են խախտելու երևույթների սովորական ընթացքը:

Փոքրիկ փուշն անգամ կարող է ստիպել ճամփորդին ընդհատել ուղին, անզեն աչքով անտեսանելի բջիջը՝ փչացնել առողջ մարմինը: Անցյալում ապրած վախի ակնթարթի մասին հիշողությունը կբերի նրան, որ այդ վախը կրկնվի ամեն առավոտ: Ընդամենը կես ակնթարթ տևած հապաղումը հակառակորդի հուժկու հարվածի համար զինվորի կուրծքը կբացի:

Զինվորը երբեք չի արհամարհում մանրուքները:

Երբեմն նա ստիպված է դրա համար շատ դաժան լինել ինքն իր հետ, բայց նա հենց այդ ձևով է գործում:

‹‹Սատանան մանրուքներով է ապրում››,- բարբառում է հին ասացվածքը:

50

Լույսի զինվորը միշտ չէ, որ կարողանում է պահպանել հավատը: Լինում են պահեր, երբ նա բացարձակապես ոչնչի չի հավատում և հարցնում է իր սրտին. ‹‹Մի՞թե անհրաժեշտ են այդպիսի ջանքեր››:

Բայց սիրտը լռում է: Եվ զինվորը պետք է ինքը որոշի:

Այդժամ նա սկսում է օրինակ և տիպար փնտրել: Եվ հիշում է, որ Հիսուսը նման մի բանով անցել է, որպեսզի ամբողջությամբ իր վրա վերցնի մահկանացուի համար նախատեսված ճակատագիրը:

«Անցցէ բաժակս այս յինէն»,- ասում է Հիսուսը: Պատահել է, որ ինքն էլ է կորցրել արիությունն ու հոգու առույգությունը, բայց կանգ չի առել:

Լույսի զինվորը, նույնիկ որոշ ժամանակ առանց հավատի մնալով, շարունակում է առաջ գնալ ու վերջիվերջո ձեռք է բերում կորցրածը:

51

Զինվորը գիտե, որ մարդը կղզի չէ:

Նա չի կարող միայնակ պայքարել. ինչ մտադրություն էլ ունենա, նա կախման մեջ է ուրիշ մարդկանցից: Նա կարիք ունի իր որոշումները քննարկելու մեկի հետ, մեկնումեկից օգնություն ու աջակցություն ստանալու, իսկ հանգստի պահին, խարույկի մոտ նստած, պատմելու մեկին անցած կռիվներից:

Բայց զինվորը թույլ չի տա, որ մարդիկ իր այդ պահանջմունքն ընդունեն որպես անվստահություն սեփական անձի նկատմամբ: Նրա արարքներն ակնհայտ են, բայց մտադրությունները քողարկված են խորհրդավորությամբ:

Լույսի զինվորն իր բոլոր ընկերների հետ պար է գալիս, բայց ոչ ոքի վրա չի զցում իր գործած քայլերի պատասխանատվությունը:

52

Կռիվների արանքում՝ ընդմիջումներին, լույսի զինվորը տրվում է հանգստի:

Հաճախ պատահում է, որ նա, օրերով իր սրտի ուզածն անելով, տրվում է անգործության, բայց ոգին առույգ է: Այդ օրերին զինվորը ծուլության մահացու մեղքին չի տրվում, քանզի գիտե՝ դա կբերի նրան կիրակնօրյա հոգնեցուցիչ թմրության, երբ ժամանակն անցնում է, և ուրիշ ոչինչ: Զինվորը դա անվանում է «գերեզմանոցային անդորր»: Նա չի մոռանում Ապոկալիպսիսի տողերը.«Անիծում եմ քեզ, քանզի դու ոչ սառն ես, ոչ ջերմ: Օ՜, եթե դու լինեիր սառը կամ ջերմ: Բայց քանի որ տաք ես, այլ ոչ թե ջերմ և ոչ էլ սառն, ուստի դուրս կշպրտեմ քեզ իմ շուրթերից»:

Զինվորը տրվում է հանգստի և ուրախության, բայց նա միշտ զգոն է:

53

Լույսի զինվորը գիտե. ողջ աշխարհը վախով է համակված ողջ աշխարհի հանդեպ: Այդ վախը սովորաբար երկու եղանակով է դրսևորվում՝ կամ որպես ռազմատենչ ճնշում, կամ որպես խոնարհ հնազանդություն: Սրանք նույն մեդալի երկու երեսն են:

Դրա համար էլ, հայտնվելով նրա առաջ, ով իրեն վախ է ներշնչում, զինվորը հիշում է. այս մարդն ինքն իր նկատմամբ նույն անվստահությամբ է համակված: Նա էլ է հաղթահարել նման խոչընդոտներ, նա էլ է բախվել նույն դժվարություններին:

Բայց այդ դեպքում ինչո՞ւ է նա ավելի ուժեղ: Որովհետև նա իր վախն օգտագործում է որպես խթան, այլ ոչ թե արգելք:

Եվ զինվորը, սովորելով իր հակառակորդից, ինքն իրեն նրա նման է պահում:

54

Լույսի զինվորի համար անհնարին սեր չի լինում:

Նրան չես հուզի ո՛չ մեկուսի լռությամբ, ո՛չ անտարբերությամբ, ո՛չ էլ արհամարհալից վերաբերմունքով: Նա տեսնում է, որ սառցե դիմակի տակ, որով մարդիկ ծածկում են իրենց, կրակոտ սիրտ է թաքնված:

Դրա համար էլ նա ավելի շատ է ռիսկի դիմում, քան ուրիշները:

Անդուլ ու անդադար նա սեր է փնտրում, թեկուզ այդ փնտրտուքի մեջ երբեմն ստիպված լինի «ոչ» բառը լսելու, դատարկաձեռն հեռանալու, թե՛ հոգով, թե՛ մարմնով իրեն մերժված զգալու:

Զինվորը թույլ չի տալիս իրեն վախեցնել, երբ փնտրում է նրան, ում կարիքն ունի: Առանց սիրո նա ոչինչ է:

55

Լույսի զինվորը վճռորոշ ճակատամարտին նախորդող խաղաղությունը կարողանում է ճանաչել: Եվ թվում է, թե խաղաղությունն այդ ասում է. «Ամեն ինչ քարացել է ու կանգ առել: Ավելի լավ չէ՞ մոռանալ կռվի մասին ու քեֆ անել»: Անփորձ մարտիկներն այդ պահերին ձեռքից վայր են դնում զենքը և հետո դժգոհում, որ տխուր են: Զինվորն արթուն ունկնդրում է լռությունը՝ իմանալով, որ ինչ-որ տեղ ինչ-որ բան ահա-ահա կկատարվի: Նա գիտե, որ ավերիչ երկրաշարժերը գալիս են առանց նախազգուշացման: Նա առիթ ունեցել է թափառելու գիշերային անտառով և միշտ հիշում է այդ հավաստի նախանշանը. եթե գազանների ու թռչունների ձայներ չեն լսվում, ուրեմն վտանգը մոտ է:

Եվ քանի դեռ մյուսները զրույց են վարում, զինվորը թրին տիրապետելու արվեստը կատարելության է հասցնում և աչքը հորիզոնից չի կտրում:

56

Լույսի զինվորը դյուրահավատ է:

Նա հավատում է հրաշքներին, և հրաշքներն իրականանում են:

Նա համոզված է, որ ընդունակ է մտքով վերափոխելու կյանքը, և կյանքը կամաց-կամաց այլ է դառնում:

Նա չի երկմտում, որ կհանդիպի իր սիրուն, և ահա հայտնվում է սերը:

Ժամանակ առ ժամանակ նա խորը հիասթափություններ է ապրում: Երբեմն ստիպված է լինում տառապելու:

«Ինչքա՜ն միամիտն է», - հաճախ լսում է նա իր թիկունքում:

Բայց զինվորը գիտե՝ ինքը շահեկան վիճակում է:

Ամեն մի պարտության հասնում է երկու հաղթանակ:

Դա հավատալու ունակությամբ օժտված ամեն ոք գիտե:

57

Լույսի զինվորը հասկացել է, որ ավելի լավ է հետևել լույսին:

Պատահել է, որ ինքը ստի և դավաճանի, շեղվի իր ուղուց, թափառի խավարում: Եվ ամեն ինչ անցել է, կարծես չի էլ եղել:

Ու ահա առջևում անսպասելիորեն բացվում է անդունդը , կարելի է հազար ամուր ու վստահ քայլ անել, իսկ հազարմեկերորդ քայլը ընդհատվում է հենց անդունդի եզրին, երբ զինվորը մի պահ կանգ է առնում կործանումից առաջ:

Եվ այդ որոշումն ընդունելով՝ նա լսում է այս խոսքերը. «Դու միշտ սխալ ես վարվել: Դու բավականին ծեր ես, փոխվելու համար արդեն ուշ է: Դու լավը չես: Դու դրան արժանի չես»:

Եվ նա նայում է երկնքին: Ինչ-որ ձայն ասում է նրան. «Սիրելի՛ս, դու միակը չես, ամբողջ աշխարհին է սխալներ գործել: Դու ներված ես, բայց ես չեմ կարող քո վզին փաթաթել այս ներումը: Դու որոշի՛ր»:

Իսկական լույսի զինվորը ընդունում է ներումը:

58

Լույսի զինվորը միշտ ձգտում է կատարելության:

Իր թրի յուրաքանչյուր հարվածի ետևում իմաստնության ու մտածումի հարյուրամյակ կա: Ամեն մի հարված իր մեջ պիտի ներառի անցյալի բոլոր այն զինվորների ուժն ու ճարպկությունը, ովքեր հիմա էլ շարունակում են օրհներգել մարտը: Զինվորի ամեն մի շարժումը մեծարում է այն շարժումներին, որոնք նախորդ սերունդները փորձել են ավանդույթի ուժով փոխանցել ներկա սերունդներին:

Զինվորը կատարելագործում է իր հարվածների գեղեցկությունը:

59

Լույսի զինվորն արժանի է վստահության:

Երբեմն նա չմտածված քայլեր է անում, երբեմն չափից ավելի է կարևորում իրեն, քան կա իրականում, բայց նա երբեք չի ստում:

Ընկերների ու ընկերուհիների հետ խարույկի շուրջը նստած՝ նա զրուցում է: Նա գիտե, որ իր խոսքերը պիտի պահպանվեն Տիեզերքի հիշողության մեջ՝ որպես մի վկայություն նրա, ինչին նվիրված են իր խոհերը:

«Ինչու՞ եմ այսքան շատ խոսում, եթե երբեմն ի վիճակի չեմ իմ խոսքերը գործի վերածելու», - խորհում է զինվորը:

«Երբ դու մարդկանց մեջ բացահայտ պաշտպանում ես քո հայացքները, քո կամքից անկախ պարտավոր ես հյացքներիդ հետ համաձայնեցված ապրել», - պատասխանում է նրան սիրտը:

Ու քանի որ նրա խոսքերն իր մտքերի անփոփոխ ու ճշտգրիտ անդրադարձն են, զինվորը վերջիվերջո դառնում է նա, ինչի մասին խոսում է :

60

Զինվորը գիտե, որ ժամանակ առ ժամանակ ճակատամարտն ընդհատվում է: Այդժամ նա ջանք չի էլ թափում, որ անհապաղ վերսկսի այն. նա գիտե, որ հարկավոր է զինվել համբերությամբ ու սպասել, մինչև ուժերը վերականգնվեն: Երբ կռվի դաշտում սկսում է լռություն տիրել, զինվորը լսում է իր սրտի զարկերը:

Նա հասկանում է, որ ինքը լարվածության մեջ է: Նա գիտակցում է, որ իր մեջ վախ կա:

Զինվորը ձգտում է իր կյանքում հավասարակշռության, ասել է թե՝ անհրաժեշտ է, որ թրի շեղբը դիպուկ լինի, սիրտը՝ բավարարված, իսկ հավատը խանդավառի հոգին: Նա գիտե, որ դա պակաս կարևոր չէ, քան գործելը:

Միշտ ինչ-որ բան չի բավարարում: Եվ այն պահին, երբ ժամանակն ընդհատում է իր վազքը, զինվորը դա օգտագործում է, որ լրացնի պակասն ու ավելի լավ զինվի առաջիկա ճակատամարտի համար:

61

Զինվորը գիտե, որ հրեշտակն ու սատանան վիճարկում են թուրը բռնած իր ձեռքի համար:

«Դու թուլանում ես, դու չես կարող որսալ անհրաժեշտ պահը: Դու վախենում ես», - ասում է սատանան: «Դու թուլանում ես, դու չես կարող որսալ անհրաժեշտ պահը: Դու վախենում ես», - ասում է հրեշտակը:

Զինվորն ապշած է. երկուսն էլ նույն բանն են ասում:

«Արի, ես օգնեմ քեզ», - շարունակում է սատանան: Հրեշտակն էլ է ասում.«Ես կօգնեմ քեզ»:

Եվ ահա այդժամ զինվորը զգում է տարբերությունը: Բառերը նույնն են, միայն տարբեր շուրթեր են դրանք արտաբերում:

Այդ ժամանակ զինվորն ընտրում է իր հրեշտակի ձեռքը:

62

Ամեն անգամ, երբ զինվորը հարկադրված է լինում մերկացնելու իր թուրը, նա ըստ նշանակության է օգտագործում այն:

Նա կարող է թրով ճանապարհ հարթել, ինչ-որ մեկին օգնություն ցույց տալ, շեղել վերահաս վտանգը, բայց թուրը քմահաճ է և չի սիրում, երբ իր շեղբը առանց պատճառի մերկացնում են:

Դրա համար էլ զինվորը երբեք չի դիմում սպառնալիքների: Նա կարող է հարձակվել, կարող է պաշտպանվել, կարող է փախուստի դիմել: Թ՛ե դա, թ՛ե մյուսը, և թ՛ե երրորդը կռվի բաղկացուցիչ էությունն են:

Ուստի հարվածով պարծենալ, նշանակում է դատարկ տեղը վատնել իր ուժերը, և դա կռվի հետ ոչ մի կապ չունի:

Լույսի զինվորը մշտապես հետևում է իր թրի շարժումներին: Բայց նաև ոչ մի րոպե չի մոռանում, որ թուրն էլ ուշադիր հետևում է իր շարժումներին: Քանզի թուրը ստեղծված է ոչ նրա համար, որ ուղեկցի խոսքին:

63

Պատահում է, որ չարն անընդհատ հետապնդում է զինվորին, և այդ դեպքում նա, չկորցնելով անդորրը, հրավիրում է չարին իր վրանը:

Զինվորը հարցնում է նրան. «Դու ուզում ես ի՞նձ վնաս հասցնել, թ՞ե իմ օգնությամբ՝ ուրիշներին»:

Չարը ձևացնում է, թե իբր չի լսում: Ասում է, թե իրեն հայտնի են զինվորի հոգու ամենաթաքուն անկյունները: Փորփրում է դեռ մինչև վերջ չսպիացած վերքերը և դրդում հատուցման: Հիշեցնում է, որ ինքը տիրապետում է խորամանկ խարդավանքների և աննկատ գործող թույներ ունի, որոնց օգնությամբ զինվորը կարող է ոչնչացնել իր թշնամիներին:

Լույսի զինվորը լսում է: Երբ չարը լռում է, նա դրդում է վերսկսելու իր խոսքը, խնդրում իր բոլոր մտադրությունների մասին ավելի հանգամանալից պատմել:

Մինչև վերջ լսելով՝ զինվորը ոտքի է կանգնում ու թողնում-հեռանում: Իսկ չարն այնքան է խոսել, այնքան ուժասպառվել ու դատարկվել, որ արդեն ուժ չունի նրան հետևելու:

64

Լույսի զինվորը, անկախ իր կամքից, սխալ քայլ է անում և սուզվում անդունդում:

Մենակությունը կեղեքում է նրան, ուրվականները՝ վախեցնում: Երբ նա Արդար կռիվ էր փնտրում, չէր պատկերացնում, որ իր հետ նման բաներ կպատահեն: Սակայն պատահեցին: Խավարով պատված՝ նա կանչում է իր խորհրդատուին: «Ուսուցի՜չ, ես ծովն եմ սուզվում, - ասում է նա: - Ջրերն այնքան մութ են, այնքան խորը»:

«Մի բան լա՛վ հիշիր, - պատասխանում է նա, - խեղդվում ու խորտակվում է ոչ նա, ով սուզվել է, այլ նա, ով ջրի տակ է մնացել»:

Եվ լույսի զինվորը լարում է իր բոլոր ուժերը, որ դուրս պրծնի այն իրադրությունից, որում ինքը հայտնվել է:

65

Լույսի զինվորը իրեն երեխայի նման է պահում: Նա շշմեցնում է մարդկանց, ովքեր մոռացել են, որ երեխան պետք է չարություն անի, խաղա, երբեմն մի քիչ հանդուգն լինի, միամիտ հարցեր տա, հիմարություններ ասի, որոնց ինքն էլ չի հավատում:

Ու մարդիկ սարսափած բացականչում են. «Մի՞թե սա է հոգևոր ուղին: Բայց այս մարդը տհաս է»:

Զինվորն այսպիսի արձագանքներից հպարտանում է: Եվ իր անմեղ ուրախությամբ, տեսադաշտում պահելով իր կոչումը, շարունակում է Աստծո հետ կապի մեջ լինել:

66

«Պատասխանատվություն» բառի արմատը բացատրում է իմաստը՝ պատասխանելու, արձագանքելու ու գործելու ունակություն: Պատասխանատու զինվորն ընդունակ է եղել հետևելու և վարժանքներ անելու: Բայց դրա հետ մեկտեղ նա ընդունակ է եղել «անպատասխանատվության», այսինքն՝ խոնարհաբար

հնազանդվելու դեպքերի ընթացքին՝ չարձագանքելով դրանց մարտահրավերներին, և չդիմադրելու դրանց:

Բայց նա յուրացրել է դասերը, լսել է խորհուրդները և խոնարհաբար ընդունել օգնությունը:

Զինվորին պատասխանատու կարելի է կոչել ոչ այն դեպքում, երբ նա իր ուսերին է վերցնում աշխարհի ամբողջ ծանրությունը. պատասխանատու զինվորը նա է, ով սովորել է արձագանքել հենց այս պահի կանչին:

67

Լույսի զինվորը միշտ չէ, որ ինքն է ընտրում իր կռվի դաշտը: Հաճախ նրան հանկարծակիի են բերում, և նա հայտնվում է հենց կռվի նախաշեմին, որին չէր էլ ձգտում, բայց այդպիսի դեպքերում նա չի փորձում փախչել, քանզի գիտե, որ նման կռիվներն իրեն միշտ էլ հետապնդելու են:

Եվ ահա, երբ ընդհարումը գրեթե անխուսափելի է, զինվորն իր հակառակորդի հետ զրույցի մեջ է մտնում: Առանց իր վախն ու երկչոտությունը մատնելու՝ նա փորձում է իմանալ պատճառը, որի համար սա ուզել է կռվել իր հետ, ինչն է ստիպել նրան թողնել հայրենի գյուղն ու իր հետ կռիվ փնտրել: Առանց սուրը մերկացնելու՝ զինվորը համոզում է հակառակորդին, որ սա նրա կռիվը չէ:

Լույսի զինվորը լսում է այն ամենը, ինչ նրան ուզում է ասել հակառակորդը: Նա կմենամարտի հակառակորդի հետ միայն՝ եթե կռիվն անխուսափելի է:

68

Լույսի զինվորը կարևոր որոշումներ ընդունելուց առաջ ուժգին վախ է ապրում:

«Այս առաջադրանքը քո ուժերից վեր է», - ասում է նրան մի ընկերը: «Գնա առաջ, մի՛ կորցրու արիությունդ», - ասում է մյուսը: Եվ այսպիսի ճառերից նրա տարակուսանքը միայն ավելի է ուժեղանում:

Ու ահա մի քանի օր թախծի ու խռովքի մեջ անցկացնելով՝ նա սթափվում է իր վրանում, հենց այն անկյունում, որտեղ սովոր է մտորել ու աղոթել:

Նա հայացք է գցում իր ապագային: Տեսնում է մարդկանց, ում նկատմամբ իր վերաբերմունքը կբարձրացնիեն կամ կգլորի ցած: Նա ոչ մեկի չի ուզում տառապանք պատճառել, բայց և չի ուզում թողնել նրանց ընտրած ուղին:

Այդժամ զինվորը սպասում է, մինչև որոշումն ինքն իրեն հասունանա:

Եթե հարկ կլինի ասել «այո», նա այդ բառը խիզախորեն կարտաբերի, եթե հարկ կլինի «ոչ» ասել, ապա՝ միայն վախով:

69

Լույսի զինվորն ամբողջությամբ ընդունում է իրեն բաժին ընկած ուղին: «Ի՞նչ զարմանալի հավատ», - ասում են նրա ընկերները:

Այդ բառերից զինվորը մի քանի րոպե համակվում է հպարտությամբ, բայց նույն պահին ամոթն իրեն պատում է, քանզի այն հավատը, որ արտաքուստ ցույց է տալիս, իրականում չկա իր հոգում:

Այդ պահին նրա հրեշտակը շշնջում է իրեն. «Դու ընդամենը միջոց ես լույսի: Դու փառասիրության առիթ չունես, բայց և պատճառ էլ չկա քեզ մեղավոր զգալու: Դու միայն հրճվելու պատճառ ունես»:

Եվ լույսի զինվորը, իրեն իբրև միջոց գիտակցելով, ձեռք է բերում խաղաղություն ու վստահություն:

70

«Հիտլերը գուցե և կռվի դաշտում պարտվեց, բայց ինչ-որ բանում նա հաղթող դուրս եկավ, - ասում է Մ. Հալտերը:- Քանզի 20-րդ դարի մարդը ստեղծեց համակենտրոնացման ճամբար, վերածնեց լլկանքները ու ինքն իրեն ներշնչեց, որ կարելի է աչք փակել քեզ շրջապատողների դժբախտության վրա»:

Գուցե և նա ճիշտ է: Չէ՞ որ գոյություն ունեն բարձիթողի ու անապաստան երեխաներ, խաղաղ բնակչության արյունալի հաշվեհարդարներ, միայնակ ծերեր, հարբեցողներ կոյուղիների անցումներում, խելագարներ իշխանության ղեկին:

Իսկ գուցե և բոլորովին էլ ճիշտ չէ, քանզի գոյություն ունեն լույսի զինվորները: Իսկ լույսի զինվորները երբեք անընդունելին չեն ընդունում:

71

Լույսի զինվորը միշտ հիշում է հինավուրց ասացվածքը. «Միայն դատարկ տակառն է զնգում»:

Անարդարություններ հաճախ են կատարվում: Մարդիկ ընկնում են դժվարին իրավիճակների մեջ, որոնց արժանի չեն. սովորաբար դա պատահում է այն ժամանակ, երբ նրանք չեն կարողանում պաշտպանվել: Պատահում է, որ դժվարությունը բախում է նաև զինվորի դուռը:

Երբ նման բան է կատարվում, նա ներամփոփ է դառնում ու լռում: Իր ուժերը չի վատնում բառերի վրա, որովհետև դրանք ոչնչով չեն կարող օգնել: Ավելի լավ է ուժերը պահպանել դիմադրության համար, զինվել համբերությամբ և դրա հետ մեկտեղ հիշել, որ ինչ-որ Մեկը նայում է քեզ: Ինչ-որ Մեկը տեսնում է, որ դու անարդարացիորեն տառապում ես, և չի պատրաստվում հաշտվել դրա հետ:

Ինչ-որ մեկը տալիս է զինվորին այն, ինչի կարիքը նա ամենից շատը ունի՝ ժամանակ: Վաղ թե ուշ ամեն ինչ նրա օգտին կշրջվի:

Լույսի զինվորն իմաստուն է, դրա համար էլ չի շատախոսում իր պարտությունների մասին:

72

Առաջին իսկ կռվում թուրը կարող է կոտրվել: Բայց զինվորը պարտավոր է այնպես վարվել, որ այն իրեն երկար ծառայի:

Այդ պատճառով էլ նա չի չի խաբում իրեն սեփական ուժերի ու շնորհքի առիթով և թույլ չի տալիս, որ հանգամանքներն անակնկալի բերեն իրեն: Ամեն ինչ աշխարհում նա ըստ արժանվույն է գնահատում:

Հաճախ է պատահում՝ տանջալից փորձություններին դեմ հանդիման գնալիս նա լսում է, թե սատանան ինչպես է շշնջում իր ականջին. «Մի՛ մտահոգվիր դրա համար, դա դատարկ բան է»:

Բայց լինում է և հակառակը: Երբ ոչ մի արտակարգ բան չի կատարվում, սատանան համոզում է զինվորին. «Հավաքի՛ր քո բոլոր ուժերը, քո ամբողջ էներգիան ուղղորդի՛ր դեպի այն, որ լուծես այդ իրավիճակը»:

Լույսի զինվորը չի լսում, թե ինչ է ներշնչում սատանան. նա ինքն է իր թրի տերը:

73

Լույսի զինվորը միշտ զգաստ վիճակում է : Նա թույլատվություն չի խնդրում իր թուրը շարժելու համար, այլ պարզապես այն ձեռքն է վերցնում: Նույն կերպ նա ժամանակ չի կորցնում, որ բացատրի իր գործողությունները, նա հավատարիմ է այն ամենին, ինչ նախանշել է Աստված, և պատասխանատու է իր արածների համար:

Նա իր շուրջն է նայում և ճանաչում իր բարեկամներին: Նա ետ է շրջվում և առանձնացնում իր հակառակորդներին: Նա անողոք է դավաճանության հանդեպ, բայց երբեք վրեժ չի լուծում. միայն հեռացնում է դավաճաններին իր կյանքից՝ կռվելով նրանց դեմ ոչ ավելի, քան անհրաժեշտ է:

Լույսի զինվորը ջանք չի վատնում թվալու համար: Նա կա:

74

Զինվորը հաց չի կտրում նրանց հետ, ովքեր իր վատն են ցանկանում: Նույն կերպ հնարավոր չէ տեսնել նրան այն այն մարդկանց շրջապատում, ովքեր փորձում են «հանգստացնել» իրեն:

Նա խուսափում է նաև այն մարդկանցից, ովքեր միշտ հայտնվում են իր կողքին միայն այն ժամանակ, երբ ինքը պարտություն է կրում. այդ կեղծ բարեկամներն ուզում են բավականություն ստանալ նրա թուլությունից: Նրանք միայն անհեթեթ լուրեր են բերում:

Նրանք բարեկամական հարաբերությունների անվան տակ անհոգնել ձգտում են խորտակել զինվորի վստահությունը սեփական ուժերի հանդեպ:

Տեսնելով, որ նա վիրավոր է, նրանք կեղծ կարեկցանքի արցունքներ են թափում, բայց իրենց հոգու խորքում շատ բավարարված են, որ զինվորը պարտություն է կրել: Նրանց տրված չէ հասկանալու, որ պարտությունը ճակատամարտի բաղկացուցիչ մասն է:

Իսկական բարեկամները միշտ զինվորի կողքին են թե՛ դժվար, թե՛ ուրախ պահերին:

75

Լույսի զինվորը, պայքարն սկսելով, ազդարարում է. «Ես երազանքներ ունեմ»:

Մի քանի տարի անց նա գիտակցում է, որ կարող է հասնել այնտեղ, ուր ուզում է, և կվարձատրվի:

Այդժամ նրան թախիծն է պատում, քանզի նա ծնիոթ է թե՛ ուրիշների դժբախտություններին, թե՛ միայնությանը, թե՛ անհաջողություններին ու հիասթափություններին, որ հետապնդում են մարդկության մեծ մասին: Եվ նրան թվում է, թե ինքն արժանի չէ այն բանին, ինչը պետք է ձեռք բերի:

«Ամեն ինչ տու՛ր», - շշնջում է նրան իր հրեշտակը:

Եվ զինվորը ծնկաչոք մատուցում է Աստծուն իր բոլոր ձեռքբերումները:

Դրա շնորհիվ զինվորը դադարում է հիմար հարցեր տալ և հաղթահարում մեղքի զգացումը:

76

Լույսի զինվորի ձեռքին թուրն է: Եվ ոչ թե մեկ ուրիշը, այլ հենց զինվորն է որոշում, թե ինչ պիտի անի և ինչ չպիտի անի ինքը ոչ մի իրավիճակում:

Լինում են պահեր, երբ կյանքը նրան փորձության է ենթարկում՝ ստիպելով բաժանվել նրանից, ում միշտ սիրել է: Այդ պահերին նա մտածմունքների մեջ է ընկնում: Նա փորձում է ճշտել. ի՞նչ է դա՝ Աստծո կամքի դրսևորո՞ւմ, թե եսասիրություն: Առաջին դեպքում, եթե անգամ իր ճանապարհին հարկ է լինում ինչ-որ մեկին հրաժեշտ տալ, նա հնազանդվում է առանց բողոքի ու դժգոհության:

Իսկ եթե այդ հրաժեշտը մեկի չար դիտավորության արդյունքն է, զինվորը նրան անողոք հակահարված կտա:

Զինվորն օժտված է և՛ հարվածելու ձիրքով, և՛ ներելու: Թե՛ մեկը և թե՛ մյուսը նա կիրառում է հավասարապես վարպետությամբ:

77

Լույսի զինվորը «ազատություն» բառի թակարդը չի ընկնում: Եթե իր ժողովուրդը հալածված է, ազատությունը դառնում է կենսական անհրաժեշտություն: Զինվորը, վերցնելով իր թուրն ու վահանը, նրա համար ոչ թե կենաց, այլ մահու

պայքար է մղում: Հալածանքի դիմաց ազատությունը միանգամայն պարզ հասկացություն է. այն հակադրվում է ստրկությանը:

Բայց երբեմն զինվորը տարեց մարդկանցից լսում է. «Ա՜յ, էլ չեմ աշխատի, ազատ կլինեմ»: Իսկ երբ անցնում է մի տարի, այդ նույն մարդիկ գանգատվում են. «Կյանքը միօրինակ է ու ձանձրանալու չափ տխուր»: Այս դեպքում «ազատությունը» լրիվ ուրիշ մի բան է նշանակում՝ «զգացմունքների բացակայություն»:

Լույսի զինվորը իրեն ազատ չի համարում: Նա ազատ է իր արարքների մեջ, բայց իր երազանքների ստրուկն է:

78

Լույսի զինվորը կռվում իրեն ամեն անգամ տարբեր կերպ է պահում, հատկապես, երբ չկա հարձակում կամ նահանջ: Եթե կռիվը հաղթանակի չի հասնում կամ չի ավարտվում պարտությամբ, զինվորը հասկանում է. հակառակորդի հետ պետք է քննարկել զինադադարի պայմանները: Երկու կողմերն էլ բավարար չափով ցուցադրել են թուրը գործածելու իրենց արվեստը, և նրանց հիմա պետք է իրար հասկանալ:

Բանակցությունները վկայում են արժանապատվության, այլ ոչ թե փոքրոգության մասին: Դա ուժերի հավասարակշռություն է և ռազմավարության հերթափոխ:

Խաղաղության կնքման ծրագիրը մշակելով՝ զինվորները վերադառնում են տուն: Նրանք ոչ մեկին ոչինչ չունեն ապացուցելու. նրանք Արդար կռիվ են մղել ու ամրապնդել հավատը: Նրանցից յուրաքանչյուրը զիջել է մի փոքր՝ տիրապետելով, այդպիսով, բանակցությունների արվեստին:

79

Ընկերները հարցնում են լույսի զինվորին՝ որտեղից է նա վերցնում իր էներգիան: «Անտեսանելի հակառակորդից», - պատասխանում է նա:

Ընկերները հարցնում են՝ այդ դեպքում ով է նա:

«Նա, ում մենք չենք կարող խոցել», - պատասխանում է զինվորը:

Դա կարող է լինել հասակակից ընկերը, ով ինչ-որ ժամանակ մանկական կռվում հաղթել է զինվորին, կամ մի աղջիկ, որ 11 տարեկան հասակում ասել է, որ զինվորն իրեն դուր չի գալիս, կամ ուսուցիչը, ով զինվորին բութ է անվանել: Տանջված լինելով և ուժասպառվելով զինվորը հիշում է, որ այդ անտեսանելի հակառակորդը դեռ չի տեսել իր խիզախությունը:

Ո՜չ, նա չի մտմտում վրեժխնդրության մասին, քանզի անտեսանելի հակառակորդն արդեն վաղուց դադարել է իր կյանքի մասնիկը լինելուց: Նա մտածում է միայն այն մասին, թե ինչպես հասնի կատարելության, որպեսզի իր գործերի մասին լուրերը տարածվեն ողջ աշխարհում ու հասնեն այն մարդկանց ականջներին, ովքեր վաղ անցյալում իրեն ցավ են պատճառել:

Լույսի զինվորի ուժի աղբյուրը հենց այդ ‹‹երեկվա›› ցավն է:

80

Լույսի զինվորի կյանքում միշտ էլ կա երկրորդ փորձի հնարավորությունը: Ինչպես բոլոր մարդիկ, նա էլ ի ծնե չի ժառանգել թրին տիրապետելու արվեստը: Շատ անգամ է սխալվել, մինչև գտել է իր ուղին:

Չկա մի զինվոր, որ խարույկի կողքին նստած՝ կարողանա ասել իր ընկերներին. ‹‹Ես միշտ ճիշտ եմ վարվել››: Նա, ով նման բան է պնդում, կա՛մ ճշմարտությունը չի ասում, կա՛մ դեռ չի սովորել ճանաչել ինքն իրեն: Քանզի իսկական լույսի զինվորը նախկինում, պատահել է, որ անարդար է վարվել:

Բայց հետո՝ իր ուղին անցնելիս, նա հասկանում է, որ ճակատագիրն անկասկած կրկին կհանդիպեցնի իրեն այն մարդկանց հետ, ում հանդեպ նա իրեն ճիշտ չի պահել: Այսպես նրան հնարավորություն է տրվում իր գործած չարը ուղղելու: Եվ առանց երկմտելու զինվորն օգտագործում է այդ հնարավորությունը:

81

Զինվորը պարզասիրտ է, ինչպես աղավնին և իմաստուն է, ինչպես օձը: Ուրիշների հետ հանդիպելով ու զրուցելով՝ չի դատապարտում նրանց պահվածքը, քանզի գիտե. մութը որսում է իր հոգուց բխող չարը անտեսանելի ցանցով: Նրանք

ճանկում են այն ամենը, ինչ անտեսանելիորեն ճախրում է օդում՝ վերածելով դրանք նախանձի ու ատելության, որոնք էլ սկսում են խժռել մարդկային հոգին:

Դրա համար էլ այն, ինչ ասվում է որևէ մեկի հասցեին, անկասկած, հասնում է նրանց ականջներին, ովքեր կռվում են այդ մարդու հետ՝ չարության թունավոր լիցքերը հավելած:

Ուստի երբ զինվորը արտահայտվում է իր եղբոր մասին, պատկերացնում է, որ նա, կանգնած իր կողքին, լսում է իր ամեն մի բառը:

82

Միջնադարյան ասպետի սեղանի գրքում ասված է. «Ճանապարհի հոգևոր էներգիան արդարության և համբերատարության օգնությամբ կոփում է քո ոգին:

Ասպիսին է ասպետի ուղին. Դա և՛ դյուրին է, և՛ միաժամանակ փշոտ, քանզի ստիպում է մի կողմ նետել ամեն անպետք բան, այդ թվում նաև կասկածելի ընկերությունը: Դրա համար էլ հենց սկզբից այդպիսի տարակուսանքներն ալեկոծում են բոլոր նրանց, ովքեր ընդունում են դա:

Ահա Ասպետականության առաջին պատվիրանը. ջնջի՛ր քո կյանքի գրքից այն, ինչ մինչև այս պահը պահպանել ես՝ անհանգստություն, անհամաձայնություն, կեղծիք: Իսկ ջնջածի տեղ միայն մի՛ բառ ավելացրու՝«խիզախություն»:

Այս բառով ճանապարհ ընկնելով և այդ ճանապարհին հավատն առ Աստված ամրապնդելով՝ դու կհասնես այն նպատակին, որին ձգտում ես»:

83

Ճակատամարտի նախաշեմին լույսի զինվորը ջանում է ամեն անսպասելի բանի պատրաստ լինել:

Նա ռազմավարական ամեն մի քայլ մտածում է և հարցնում ինքն իրեն. «Իսկ ի՞նչ կձեռնարկեի ես, եթե ստիպված լինեի ինքս ինձ հետ կռվել»: Եվ այսկերպ առանձնացնում է իր թույլ կողմերը:

Այդ պահին հայտնվում է հակառակորդը՝ բերելով իր հետ մի ամբողջ կույտ խոստումներ, պայմանագրեր, առաջարկություններ, որոնք գայթակղություն են ներշնչում, և տարբերակներ, որոնք կարող են երկու կողմին էլ բավարարել:

Զինվորը խնամքով ծանրութեթև է անում ամեն մի առաջարկություն, նա էլ է ձգտում հասնել համաձայնության՝ բայց չկորցնելով սեփական արժանապատվությունը: Եթե նա խուսափում է կռվից, ապա ոչ նրա համար, որ իրեն գայթակղել են հակառակորդի ասածները , այլ միայն նրա համար, որ դա համարում է լավագույն ռազմավարությունը:

Լույսի զինվորը թշնամուց պարգևներ չի ընդունմում:

84

Այսպիսով՝ կրկնում եմ. լույսի զինվորներին կարելի է հայացքից ճանաչել:

Նրանք ապրում են մեր աշխարհում, նրանք մեր աշխարհի մի մասն են կազմում, նրանք ուղարկված են մեր աշխարհ և եկել են այստեղ առանց ցուպի ու ոտնամանի: Հազվադեպ չէ, որ նրանք վախ են զգում, միշտ չէ, որ ճիշտ են գործում:

Լույսի զինվորները հաճախ են տանջվում պարապսարապությունից, դառնանում չնչին բաներից, համարում են, թե ընդունակ չեն աճելու: Նրանք ժամանակ առ ժամանակ մտածում են, որ իրենք արժանի չեն ո՛չ հրաշքի, ո՛չ հաջողության:

Լույսի զինվորները հաճախ են իրենք իրենց ու մեկը մյուսին հարցնում, թե ի՛նչ են անում իրենք այստեղ և ավելի հաճախ գալիս են այն եզրակացության, որ իրենց կյանքը զուրկ է իմաստից:

Դրա համար էլ իրենք լույսի զինվորներ են: Որովհետև սխալներ են գործում: Որովհետև անհոգնել իմաստ են փնտրում: Փնտրում են և վերջին հաշվով գտնում այն:

85

Լույսի զինվորը հիմա արթնանում է քնից: «Ես չեմ կարող հաղթահարել այս լույսը, որ ստիպում է ինձ աճել» - մտածում է նա: Իսկ լույսն այդ ընթացքում չի անհետանում:

«Փոփոխություններ կպահանջվեն, իսկ ես չնչին ցանկություն անգամ չունեմ դրանք ծրագրելու» - մտածում է նա:

Բայց լույսը ո՛չ շողարձակում է, ո՛չ էլ հանգչում, քանզի «ցանկություն» բառը լի է թաքնված իմաստներով:

Եվ այդժամ զինվորի աչքերն ու սիրտը քիչ-քիչ սկսում են հարմարվել լույսին: Այն այլևս չի վախեցնում զինվորին, և նա ընդունում է կյանքի Իր Ուղին՝ հասկանալով, որ ինքը ստիպված կլինի ռիսկի դիմել:

Լույսի զինվորը երկար ժամանակ է քնի մեջ եղել: Շատ բնական է, որ նա կամաց-կամաց է վերադառնում իրականություն:

86

Մեծ ռազմիկը հանդուրժում ու տանում է վիրավորանքը: Նա գիտե իր բռունցքի թափը և իր հարվածի ուժը: Հայտնվելով կռվին պատրաստվել չհասցրած հակառակորդի առաջ՝ զինվորը նայում է նրա աչքերին, աչքերի ամենախորքը ու հաղթում՝ առանց կարիք ունենալու իր ֆիզիկական ուժն անգամ գործադրելու:

Ինչքան ավելին է զինվորը իր հոգևոր ուսուցչի մոտ սովորում, այնքան վառ է նրա աչքերում բոցկլտում հավատի լույսը, և նա կարիք չունի ոչ մեկին ոչ մի բան ապացուցելու: Նրա համար ոչ մի նշանակություն չունեն հակառակորդի այն ռազմատենչ փաստարկները, համաձայն որոնց Աստված նախապաշարմունք է, հրաշքները՝ ոչ ավելին քան աճպարարություն, իսկ հրեշտակներին հավատալ՝ նշանակում է փախուստ իրականությունից:

Ինչպես ռազմիկը՝ լույսի զինվորն էլ գիտակցում է, թե ինչքան անհաղթելի է իր հզորությունը և երբեք մենամարտի չի մտնում նրա հետ, ով արժանի չէ նման պատվի:

87

Լույսի զինվորը միշտ հիշում է գոտեմարտի այն հինգ կանոնները, որոնք 3000 տարի առաջ ձևակերպել է Չժուան-ցզին:

Հավատ – մինչ կռվի բռնվելը պետք է հավատալ այն բանին, հանուն ինչի, որ դու անում ես դա:

Զինակից – սովորի՛ր համախոհներ ընտրել քեզ համար, նրանց հետ մեջք մեջքի տված՝ կռվի՛ր, քանզի պատերազմում միայնակ չես կարող հաղթել:

Ժամանակ – ճշմարիտ զինվորը հիշում է, որ ձմռանն իրականացվող կռիվը տարբերվում է ամռանը եղած կռվից: Կռվի մեջ մտնելով՝ նա միշտ դրա համար ընտրում է առավել հարմար ժամանակը:

Տարածություն – անհնար է կռվել լեռներում այնպես, ինչպես կռվում ես հարթավայրում: Գնահատի՛ր այն, ինչ կա քո շուրջը և ընտրի՛ր կռվի համար լավագույն տարբերակը:

Ռազմավարություն – լավագույն զինվորը նա է, ով կարողանում է կանխորոշել ու նախապատրաստել ճակատամարտի ելքը:

88

Զինվորը հազվադեպ կարող է ճակատամարտից անմիջապես հետո որոշել հաղթողին: Կռվի իրարանցումը քո շուրջը ահռելի էներգիա է ստեղծում, և ահա գալիս է այն պահը, որ հավասարապես հնարավոր է և՛ հաղթանակ, և՛ պարտություն: Միայն ժամանակը կհաստատի՝ ով է հաղթել և կամ ով՝ պարտվել, բայց զինվորը գիտե, որ այդ պահից սկսած՝ ինքն արդեն ավելին ոչինչ անել չի կարող: Ճակատամարտի բախտը Աստծո ձեռքին է:

Այդպիսի պահերին զինվորն այլևս չի անհանգստանում կռվի ելքի համար. դա նրան չի հուզում: Նա ուշադիր ունկնդրում է իր սրտի ձայնին, նա հարցնում է սրտին. «Դա Արդարացի՞ կռիվ էր: Ես կռվեցի՞ այնպես , ինչպես պետք էր»: Եթե սիրտը նրան դրական պատասխան է տալիս, նա տրվում է հանգստի, իսկ եթե պատասխանը բացասական է, նա վերցնում է թուրն ու նորից սկսում վարժանքները:

89

Լույսի զինվորը ձգտում է, որ իր մեջ եղած Աստծո կայծը չմարի:

Ճակատագիրը նրան բաժին է հանել, որ լինի մյուս զինվորների կողքին, բայց հաճախ նրան պետք է, որ թրի արվեստին տիրապետելու վարժանքները միայնակ իրագործի: Դրա համար էլ, առանձնանալով ընկերներից, նա դառնում է աստղի նման:

Նա լուսավորում է Տիեզերքի այն հատվածը, որ իրեն է նախանշված, և ջանում է, որ նրանք, ովքեր նայում են երկնքին, տեսնեն այլ գալակտիկաներ ու աշխարհներ: Նրա համառությունն ու հավատարմությունը շուտով կհատուցվեն: Մեկը մյուսի

հետևից նրան են մոտենում մյուս զինվորները, և բոլորն իրար հետ մի աստղաբույլ են կազմում իրենց խորհրդանիշերով ու իրենց գաղտնիքներով:

90

Ժամանակ առ ժամանակ լույսի զինվորն այնպիսի տպավորություն է ունենում, թե ինքը միաժամանակ երկու կյանք է ապրում:

Դրանցից մեկում նա հարկադրված է անել այն, ինչին իր սիրտը չի կպչում. պայքարել գաղափարների համար, որոնց չի հավատում: Բայց գոյություն ունի նաև մի ուրիշ կյանք, և այն բացվում է զինվորին իր անուրջներում, սիրելի գրքերի ընթերցման մեջ, հանդիպումներում նրանց հետ, ովքեր մտածում են այնպես, ինչպես ինքը:

Զինվորը չի խոչընդոտում, որ իր երկու կյանքերը մոտենան: «Ինչ-որ կամուրջ կա, որ միավորում է իմ արածն ու իմ սրտի ուզածը» - մտածում է նա: Եվ կամաց-կամաց նրա երազանքները հաստատում են իրենց տիրապետությունը առօրյայի վրա և նույնիսկ իշխում, և այդժամ նա հասկանում է, որ պատրաստ է անելու այն, ինչ երազել է անել:

Իսկ հիմա մի քիչ հանդգնություն է պետք, և երկու կյանքերը կձուլվեն իրար:

91

Մի անգամ ևս գրի առ այն, ինչ ես քեզ արդեն ասել եմ՝ լույսի զինվորին հենց իր համար ժամանակ է հարկավոր: Նա օգտագործում է այդ ժամանակը հանգստի համար, մտահայեցության համար, Հոգու Աշխարհի հետ հարաբերվելու համար: Անգամ գոտեմարտի թեժ պահին զինվորին հաջողվում է տրվել մտահայեցության:

Երբ գալիս է այդ պահը, զինվորը նստում է գետնին՝ առանձնանալով ամենից և չխոչընդոտելով նրան, որ իր շուրջը կատարվող իրադարձություններն ընթանան իրենց հունով: Որպես դիտորդ՝ նա նայում է աշխարհին և չի ձգտում ոչինչ ավելացնել կամ պակասեցնել: Նա ուզում է միայն հնազանդորեն ու խոնարհությամբ տրվել կյանքի ընթացքին:

Կամաց-կամաց այն, ինչ դժվար էր թվում, դառնում է պարզ: Եվ զինվորի հոգին լցվում է ուրախությամբ:

92

Լույսի զինվորը զգույշ է բոլոր նրանց հետ, ովքեր կարծում են, թե իբր գիտեն ճանապարհը:

Նրանք միշտ այնքան վստահ են որոշում կայացնելու իրենց ընդունակությունների վրա, որ չեն հասկանում այն հեգնանքը, որով ճակատագիրը վերաբերվում է նրանցից յուրաքանչյուրի կյանքին: Եվ երբ անխուսափելին բախում է դուռը, վրդովվում են:

Լույսի զինվորը երազանքներ ունի: Դրանք են նրան առաջ մղում: Բայց նա երբեք սխալ չի գործի՝ կարծելով, թե ճանապրհը հեշտ է, իսկ դուռը՝ լայն: Նա գիտե, որ Տիեզերքը գործում է այնպես, ինչպես որ ալքիմիան է գործում:«Solve et coagula», - ասում են իմաստունները: "Կենտրանացրու՛ կամ ցրի՛ր քո էներգիան համապատասխան այն իրավիճակին, որում հայտնվել ես»:

Կա գործելու ժամանակ, և կա ժամանակ՝ իրավիճակներն այնպիսին ընդունելու, ինչպիսին դրանք կան: Զինվորը գիտե տարբերությունը:

93

Թուր գործածելուն տիրապետելով՝ զինվորը գալիս է այն եզրակացության, որ իրեն լրիվ սպառազինություն է հարկավոր, ասել է թե առանց զենք ու զրահի յոլա գնալ հնարավոր չէ:

Նա ճանապարհ է ընկնում որոնումների, իսկ վաճառականներն առաջարկում են նրան իրենց ապրանքը:

-Վերցրո՛ւ մենակության զրահը, - ասում է մեկը:

-Քողարկվի՛ր ցինիզմի վահանով, - մեջ է ընկնում մյուսը:

-Լավագույն զենքն ու զրահը ոչ մի բանի մեջ չխճճվելն է, - հավաստում է երրորդը:

Բայց զինվորն այս խոսքերի հանդեպ խուլ է:

Խիզախորեն ու անվրդով նա գնում է այն տեղը, որը սուրբ է իր համար և զգեստավորվում հավատի անխորտակելի թիկնոցով:

Հավատը կպաշտպանի ցանկացած հարվածից: Հավատը թույնը կփոխի մաքրամաքուր հեղուկի:

94

“Ամբողջ կյանքում ես հավատացել եմ այն ամենին, ինչ ասել են ինձ մարդիկ, և ինձ միշտ բաժին է ընկել հիասթափությունը››, - հաճախ կրկնում են նրա ընկերները:

Մարդկանց վստահելը կարևոր է, և լույսի զինվորը չի վախենում հիասթափությունից, քանզի գիտե իր թրի թափը և իր սիրո ուժը:

Այնուհանդերձ նա գիտե իր հնարավորությունների սահմանը և հասկանում է, որ Աստծո նախախնամությունն ընդունելը և հասկանալը, որ հրեշտակները մեր հարազատների շուրթերով ղեկավարում են մեզ, մի բան է և բոլորովին այլ բան՝ ինքնուրույն որոշումներ կայացնելու անընդունակությունը և հավերժ ձգտումը անելու այնպես, որ մյուսները մեզ ասեն՝ ինչպես վարվենք այս կամ այն դեպքում:

Լույսի զինվորը վստահում է մյուսներին, քանզի առաջին հերթին վստահում է ինքն իրեն:

95

Լույսի զինվորը կյանքին առանց վախի և առանց չարության է նայում:

Նա գիտակցում է, որ իր առջև հրաշքն է, որի գաղտնիքը ինքը մի օր կգտնի: Եվ ապա, մի կիսաշրջան պտտվելով, ասում է ինքն իրեն. “Բայց ի՜նչ նման է կյանքը խելագարության››:

Եվ նա ճիշտ է: Ամենօրյա հրաշքին ապավինելով՝ զինվորը նկատում է, որ միշտ չէ, որ ինքը կարող է կանխագուշակել իր գործունեության հետևանքները:

Ե՛վ երբեմն գործում է, ինքն էլ չգիտակցելով, որ գործում է, և՛ փրկություն է ձեռք բերում՝ չիմանալով, որ փրկված է, և՛ տառապում է՝ կորչելով սեփական տխրության պատճառների խորխորատներում:

Այո՛, կյանքը խելագարություն է: Բայց զինվորի մեծագույն իմաստնությունն այն է, որ նա ճիշտ “խելագարություն» ընտրի իր համար:

96

Լույսի զինվորը զննում է երկու սյուները խոյացած այն դռան երկու կողմերին, որ մտադրվել է բացել:

Մեկը “Վախ» է կոչվում, մյուսը կրում է “Ցանկություն» անունը: Զինվորը նայում է առաջինին և կարդում փորագրած բառերը. “Դու ոտք կդնես անտեսանելի մի աշխարհ, որտեղ ոչինչ չկա այն ամենից, ինչ դու բացահայտել ես մինչև հիմա, դրանք քեզ պետք չեն գա և չեն օգնի»:

Զինվորը հայացքն ուղղում է երկրորդ սյանը և կարդում նրա վրա. “Դու լքում ես քո ճանաչած աշխարհի սահմանները, որտեղ մնում է այն ամենը, ինչը դու միշտ սիրել ես ու ինչի համար պայքարել»:

Զինվորը ժպտում է, քանզի աշխարհում ոչինչ չի կարող վախեցնել նրան և ոչ մի ուժ չի կարող կասեցնել նրա ընթացքը:

Իր ուզածն իմացող մարդու վստահությամբ նա բացում է դուռը:

97

Լույսի զինվորն իր ներքին աճի համար շատ օգտակար վարժություն է կատարում. նա ջանում է գիտակցված և ուշադիր անել այն ամենը, ինչ մենք չգիտակցված ենք անում՝ շնչել, թարթել, նկատել շրջապատը:

Նա դիմում է դրան անորոշության ու խուճապի պահերին: Եվ այս ձևով նա ազատագրվում է լարվածությունից՝ թույլ տալով իր ինտուիցիային ավելի ազատ աշխատելու, իսկ վախն ու ցանկությունները չեն խառնվում այդ աշխատանքին:

Եվ ահա վերջիվերջո լուծվում են խնդիրները, որոնք թվում էին անլուծելի, իսկ տառապանքները, որոնք նա անտանելի էր համարում, անհետ կորչում են, ընդ որում դրա համար նա ջանք անգամ չի թափում:

Դժվարին դրության մեջ ընկնելիս զինվորը մշտապես օգտագործում է այս մեթոդը:

98

Լույսի զինվորն երբեմն այսպիսի արտահայտություններ է լսում. "Ես չեմ ուզում քննարկել սա ու սա, քանզի մարդիկ նախանձ են»:

Նա ծիծաղում է՝ նման բաներ լսելով: Նախանձը չի կարող չարիք պատճառել, եթե մարդն այն հնազանդությամբ չի ընդունում: Նախանձը կյանքի մի մասն է, և ամեն մեկը պիտի կարողանա դա բուռը հավաքել:

Այնուհանդերձ, զինվորը քիչ է խոսում իր ծրագրերի մասին, դրա համար էլ մարդիկ երբեմն կարծում են, թե իբր նա զգուշանում է նախանձից:

Բայց զինվորը գիտե, որ ամեն անգամ, երբ ասում է իր երազանքների մասին, էներգիայի մի մասը ստիպված է լինում երազանքը բառերով պարուրելու վրա ծախսել:

Եվ եթե հարկ է լինում հաճախ ու մանրամասնորեն խոսելու, ամբողջ էներգիան անմնացորդ վատնելու վտանգ է առաջանում, և երազանքների իրականացման համար ոչինչ չի մնում:

Լույսի զինվորը գիտե, թե ինչ հզորությամբ են օժտված բառերը:

99

Լույսի զինվորը գիտե, թե ինչքան բարձր է համառության և խիզախության գինը: Հաճախ է պատահում այնպես, որ կռվի ժամանակ նա հարվածներ է ստանում, որոնց չէր սպասում: Եվ հասկանում է, որ քանի դեռ պատերազմը շարունակվում է, հակառակորդը կհաղթի մի քանի ճակատամարտերում: Երբ նման բան է կատարվում, նա ողբում է իր վիշտը և հետո տրվում հանգստի, որպեսզի գոնե մի քիչ վերականգնի էներգիան: Բայց դրանից անմիջապես հետո նա կրկին սկսում է պայքարել իր երազանքների համար:

Քանզի զինվորը գիտե՝ ինչքան ինքն իրեն կռվից հեռու պահի, այնքան մեծ է հավանականությունը իրեն թույլ, կամազուրկ ու վախկոտ զգալու:

Եթե վայր ընկած հեծյալը հաջորդ պահին անմիջապես ձին չթամբի, այլևս խիզախություն չի ունենա դա անելու:

100

Լույսի զինվորը գիտե՝ ինչն ինչ արժե:

Նա որոշում է այսպես, ոչ թե այլ կերպ գործելու՝ առաջնորդվելով ներշնչանքով և հավատով:

Բայց երբեմն նա հանդիպում է մարդկանց, ովքեր կանչում են՝ մասնակցելու մի կռվի, որն իրեն օտար է, ճակատամարտի դաշտ մտնելու, որն իրեն անծանոթ է ու անհետաքրքիր: Այդ մարդիկ ձգտում են այնպես անել, որ զինվորն ընդունի իրենց համար կարևոր մարտահրավերը, այլ ոչ իր համար կարևորը:

Եվ հաճախ դրանք այն մարդիկ են, որ մոտիկ են զինվորին, որ սիրում են նրան, հավատում նրա ուժին, դրա համար էլ պահանջում են, որ նա գա ու օգնի իրենց:

Երբ այդպես է պատահում, զինվորը ժպտում է, ջանում վստահեցնել, որ սիրում է նրանց, բայց չի արձագանքում նրանց կոչին:

Իսկական լույսի զինվորը միշտ ինքն է ընտրում իր կռվի դաշտը:

101

Լույսի զինվորը գերազանցել է կորուստների գիտությունը:

Պարտություն կրելով՝ նա չի ձևացնում թե անտարբեր է դրա հանդեպ, չի արտաբերում արտահայտություններ, ինչպիսիք են. «Հա՜, բայց ինձ համար դա բոլորովին կարևոր չէ» կամ «Էդքան էլ չէի ուզում»: Նա ընդունում է պարտությունը՝ որպես պարտություն, և չի ձգտում այն որպես հաղթանակ ներկայացնել:

Նա գիտե, թե ի՜նչ ցավ են պատճառում վերքերը, ի՜նչ դառն է զգալ ընկերների անտարբերությունը, ի՜նչ մենակություն ես զգում մտերիմ մարդու կորստից հետո: Այսպիսի պահերին զինվորն ասում է ինքն իրեն. «Ես կռվել եմ ու պարտվել: Ես պարտվել եմ առաջին մարտը»:

Այս բառերը նոր ուժեր են ներշնչում նրան: Զինվորը գիտե, որ չկան մարդիկ, ովքեր միշտ և ամեն ինչում հաղթում են, և կարողանում է տարբերակել իր սխալները իրավիճակների անբարենպաստ ուղղվածությունից:

102

Զինվորին հայտնի է՝ երբ դու ինչ-որ բան ես ուզում, Տիեզերքի ողջ ուժերը իրար հետ համաձայնության են գալիս, որ օգնեն քեզ: Դրա համար էլ նա շատ զգույշ է վարվում իր մտքերի հետ: Բարի մտադրությունների տակ թաքնված են այնպիսի զգացմունքներ, որոնք ոչ ոք չի համարձակվում խոստովանել անգամ ինքն իրեն՝ վրեժխնդրություն, ինքնաոչնչացման ձգտում, մեղք, վախ հաղթանակի հանդեպ, մռայլ հրճվանք՝ ծնված ուրիշի դժբախտությունից:

Տիեզերքը գլուխ չի հանում այսպիսի նրբություններից և ընդառաջ է գնում մեր ցանկություններին: Դրա համար էլ զինվորը, հավաքելով ողջ քաջությունը, զննում է սեփական հոգու մթին խորքերը, որպեսզի համոզվի, որ ինքն իր համար կործանարար ոչինչ չի խնդրում:

Եվ նա միշտ շատ զգույշ է իր մտքերի հանդեպ:

103

Զինվորը հիշում է Հիսուսի խոսքերը. «Թող ձեր խոսքի «այո»-ն այո լինի, «ոչ»-ը՝ ոչ»:

Երբ զինվորը պատասխանատվություն է իր վրա վերցնում, իր խոսքի տերն է լինում:

Նրանք, ովքեր խոստումներ են տալիս և չեն պահում դրանք, կորցնում են հարգանքը սեփական անձի հանդեպ և ամաչում սեփական արարքներից: Այս մարդկանց ամբողջ կյանքը վերածվում է մշտական փախուստի: Նրանք ավելի շատ ուժեր են ծախսում հարմար պատրվակների փնտրտուքի վրա, որպեսզի հրաժարվեն այն խոսքերից, որ արտաբերել են նախօրոք, քան զինվորն է ծախսում, որպեսզի իր խոստումներն իրագործի:

Երբեմն էլ պատահում է, որ զինվորն էլ, խելքից դուրս մի պարտավորվածություն ստանձնելով, նախապաշարումների ազդեցության տակ է ընկնում: Հետագայում նա այլևս երբեք այդպիսի բան չի անի, բայց, միևնույն է, իր խոստումից ետ չի կանգնում, իր տված խոսքը սրբություն է, և նա ըստ ամենայնի հատուցում է իր չմտածված պոռթկումի համար:

104

Մարտը շահելով՝ զինվորը տոնում է իր հաղթանակը: Դա թանկ է նստել վրան. եղել են դժվար պահեր, կասկածների տանջալի գիշերներ, սպասումի երկար ու ձիգ օրեր: Հնագույն ժամանակներում հաղթանակը տոնելու սովորությունը մտնում էր կյանքի ծիսակարգի մեջ և ներկայացվում էր հատուկ արարողակարգով:

Ընկերները, տեսնելով՝ ինչպես է հրճվում լույսի զինվորը, տարակուսում են. «Ինչո՞ւ է նա այսպիսի հանդիսություն կազմակերպում: Չէ՞ որ հաջորդ ճակատամարտը գուցե հիասթափություն բերի, չէ՞ որ նա իր վրա է բևեռում հակառակորդի զայրույթը»:

Բայց զինվորը գիտե՝ ինչով են բացատրվում իր գործողությունները: Նա ուզում է ամբողջությամբ ըմբոշխնել իր ինքնավստահությունը, քանզի դա ամենաթանկ պարգևն է, որ բերում է հաղթանակը:

Այսօր նա տոնում է երեկվա տարած հաղթանակը, իսկ այսօրվա հաղթարշավում ուժ է առնում վաղվա ճակատամարտի համար:

105

Մի գեղեցիկ օր էլ զինվորը հանկարծ հասկանում է, որ կռվում է առանց նախկին ոգևորության:

Նա շարունակում է անել այն, ինչ անում էր նախկինում, բայց թվում է՝ բոլոր շարժումները կորցրել են իրենց իմաստը: Այսպիսի պահերին նրան մի բան է մնում միայն՝ առաջվա պես մղել Արդար կռիվ: Կարևոր չէ, թե ինչ պատճառով է իրականացնում այն, ինչ պետք է՝ պատասխանատվությունի՞ց ելնելով, վախի՞ց, թե՞ մի ուրիշ բանից, բայց նա չի շեղվում Իր ուղուց:

Նա գիտե, որ իր ոգեշնչումը հովանավորող հրեշտակը հեռացել է: Բայց զինվորն իր հոգու բոլոր ուժերը ուղղում է դեպի ճակատամարտը, զինվորը համառում է անգամ, երբ ամեն ինչ թվում է անօգուտ: Ժամանակ կանցնի, և հրեշտակը

կվերադառնա, ու նրա թևերի մի թափահարումն անգամ բավական կլինի, որ զինվորի հոգում կրկին թագավորի բերկրանքը:

106

Լույսի զինվորը պատմում էուրիշներին այն, ինչ իրեն հայտնի է ուղու մասին:

Նա, ով օգնում է ուրիշներին, կարող է օգնության ակնկալիք ունենալ: Նա, ում սովորեցրել են, պետք է սովորեցնի ուրիշներին:

Դրա համար էլ զինվորը, խարույկի շուրջը նստած, պատմում է, թե ինչպես է անցել իր գրողի տարած օրը:

«Ինչո՞ւ ես բացում քո ռազմավարական գաղտնիքները - փսփսում է ընկերը: - Մի՞թե դու չես հասկանում, որ քեզ վտանգի ես ենթարկում, չէ՞ որ ստիպված կլինես քո հաղթանակները կիսել ուրիշների հետ» :

Զինվորն ի պատասխան միայն ժպտում է և ոչինչ չի ասում: Նա գիտե` եթե դրախտը, որ ստանալու է իր ճանապարհի վերջում, դատարկ ու սակավամարդ լինի, կնշանակի` իր պայքարը ոչ մի իմաստ չի ունեցել:

107

Լույսի զինվորը վաղուց է յուրացրել, որ Աստված մենակություն է ուղարկում, որպեսզի մարդուն սովորեցնի հանրային կյանքին:

Աստված օգտագործում է զայրույթը, որպեսզի ցույց տա խաղաղության անծայր արժեքը, իսկ ձանձրույթն օգտագործում է, որպեսզի պարզ դառնա խիզախումի ու ինքնամոռացման կարևորությունը:

Աստված օգտագործում է լռությունը, որպեսզի ներշնչի, թե որքան մեծ պիտի լինի ամեն հատիկ բառի պատասխանատվությունը, հոգնածությունը՝ որպեսզի առավել ակնառու դարձնի կայտառության գեղեցկությունը, ցավը՝ որպեսզի մենք լիովին գիտակցենք առողջ լինելու երջանկությունը:

Կրակի միջոցով Աստված մեզ պատկերացում է տալիս ջրի մասին: Հողի օգնությամբ սովորեցնում է, թե ինչ է օդը: Իսկ մահվան միջոցով Աստված ցույց է տալիս, թե որքան կարևոր է կյանքը:

108

Լույսի զինվորը տալիս է՝ չսպասելով խնդրելուն: Տեսնելով դա՝ ընկերներից մեկը ակնարկում է. «Ում պետք է, նա կխնդրի»:

Բայց լույսի զինվորը գիտե, որ աշխարհում շատ են մարդիկ, ովքեր չեն կարող, ուղղակի չեն կարող օգնություն խնդրել:

Նրա կողքին ապրում են այնպիսի փխրուն սրտերով մարդիկ, որ նրանց այցելած սերն էլ հիվանդագին ու թույլ է լինում: Այս մարդիկ քնքշանքի կարոտ են, բայց ամաչում են դա ցուցադրել:

Զինվորը հավաքում է նրանց խարույկի շուրջ, պատմում տարբեր դեպքեր, կիսում նրանց հետ իր պաշարը, հարբում նրանց հետ: Եվ հաջորդ օրը նրանք իրենց ավելի լավ են զգում:

Նա, ով անտարբեր է ուրիշի դժբախտությանը, ինքը ամենադժբախտն է:

109

Լարերը, վերջիվերջո, եթե անընդհատ պրկված են, սկսում են ոչ ճիշտ ձայն արձակել:

Զինվորները, որ մշտապես մարտական արվեստի վարժանքներով են տարված, կռվում արագ որոշումներ ընդունելու ու իրագործելու կարողությունը կորցնում են: Օրեցօր նոր արգելքներ հաղթահարող նժույգը, ջարդում է ոտքը: Աղեղը, որ ոչ մի պահ չի թուլացվում, չի կարող նախկին ուժով նետը նպատակին ուղարկել:

Դրա համար էլ լույսի զինվորը, եթե անգամ հակված չէ դրան, ջանում է հանգստություն գտնել ամենօրյա մանրուքներում:

110

Լույսի զինվորը հետևում է Լաո-ցզիի խոսքին, որ ուսուցանում է, թե մենք պետք է հրաժարվենք «օրեր», «ժամեր» հասկացություններից և սրատեսորեն զննենք յուրաքանչյուր պահը:

Միայն այսպես, մինչ դրանք կծագեն, զինվորը կկարողանա լուծել որոշ խնդիրներ: Մանրուքներին ակնդետ ուշադրություն հատկացնելով՝ նա կկարողանա խուսափել մեծ ցնցումներից:

Բայց մտածել մանրուքների մասին, չի նշանակում մանրախնդիր լինել: Չափից ավելի անհանգստությունը ընդունակ է ուրախության ամենաչնչին շողն անգամ վտարելու:

Զինվորը գիտե, որ մեծագույն երազանքը բաղկացած է զանազան բաների մեծագույն ամբողջությունից այնպես, ինչպես արևի լույսն է ձևավորվում միլիոնավոր շողերից:

111

Պատահում են պահեր, երբ ուղին, որով անցնում է զինվորը, դառնում է սովորական և միօրինակորեն տաղտկալի: Նման դեպքերում նրան օգնում է Նախման Բրոցլավսկու հորդորը. «Եթե դու ուժ չունես ինքնահայեցողությամբ զբաղվելու, ապա պետք է ընդամենը կրկնես սովորական բառը, քանի որ դա բարերար ազդեցություն է ունենում հոգու վրա: Կրկնի՛ր միևնույն բառը, կրկնի՛ր այն նորից ու նորից՝ առանց դադարի, անհաշի՛վ կրկնիր: Վերջիվերջո այն կկորցնի իր իմաստը, և ձեռք կբերի նոր իմաստ: Աստված կբացի դռները, և դու այդ հասարակ բառի օգնությամբ կկարողանաս արտահայտել այն, ինչ ուզում ես»:

Երբ զինվորը հարկադրված մի առաջադրանքը բազում անգամ է անում, նա օգտագործում է այդ միջոցը, և տաղտկալի պարտականությունը վերածվում է աղոթքի:

112

Զինվորին տրված չէ լիովին համոզված լինել իր արածի ճշմարիտ լինելու մեջ, բայց կա ճանապարհ, որին նա պարտավոր է հետևել, և այդ ճանապարհին նա ջանում է հարմարվել տարվա եղանակին համապատասխան: Ե՛վ կռիվ մղելու հնարքները, և՛ այդ կռվի զենք ու զրահը ամռանն այնպիսին չեն, ինչպիսին ձմռանը: Զինվորն օժտված է անհրաժեշտ ճկունությամբ, դրա համար էլ դատում է աշխարհի մասին ոչ թե «ճիշտ» կամ «սխալ» հասկացություններով, այլ հիմք է ընդունում այն «հարաբերությունները, որոնք յուրաքանչյուր տրված պահին առավել համապատասխան են»: Զինվորը գիտե, որ իր ընկերներն էլ պետք է հարմարվեն իրավիճակներին, դրա համար էլ նա չի զարմանում, երբ իրենց հարաբերությունները փոփոխվում են: Նրանցից ամեն մեկին զինվորը անհրաժեշտ ժամկետ է տալիս, որ նրանք կարողանան արդարացնել իրենց գործունեությունը:

Բայց դավաճանության հանդեպ զինվորն անողոք է:

113

Զինվորն իր բարեկամների հետ նստում է խարույկի շուրջ: Ժամերով նրանք իրար վրա փոխադարձ մեղադրանքներ են շաղ տալիս, բայց գիշերն անցկացնում են միևնույն վրանում՝ մոռացության տալով անցած վիրավորանքները: Ժամանակ առ ժամանակ նրանց մեջ մի նորեկ է հայտնվում: Քանի որ այդ նորեկը դեռ ոչ մի ընդհանուր պատմություն չունի մյուսների հետ, նա ցուցադրում է միայն իր շնորհներն ու հնարավորությունները, որի պատճառով էլ ինչ-որ մեկը նրան նայում որպես ուսուցչի:

Սակայն լույսի զինվորը նորեկին երբեք իր հին մարտական ընկերների հետ չի համեմատում: «Բարով ես եկել» - ասում է նրան զինվորը, բայց նրան վստահել սկսում է միայն այն ժամանակ, երբ ճանաչում է ոչ միայն նրա արժանիքները, այլև թերությունները:

Լույսի զինվորը կռվի մեջ չի մտնում, մինչև իր զինակցի հնարավորությունների սահմանը չի ըմբռնում:

114

Զինվորը հիշում է հնագույն ժողովրդական խոսքը. «Եթե ապաշխարանքը սպաներ…»:

Նա գիտե, որ ապաշխարանքը իսկապես սպանում է. դանդաղ, թիզ առ թիզ այն խժռում է նրա հոգին, ով անարժան գործ է արել, և անվերադարձ տանում է նրան ինքնաոչնչացման:

Զինվորն այդպիսի մահ չի ուզում: Երբ պատահում է, որ նա մեկի հանդեպ չար բան է անում՝ կորուստ կամ վնաս է պատճառում, քանզի նա էլ մարդ է՝ մարդուն հատուկ բոլոր թերություններով ու թուլություններով, ապա երբեք չի ամաչում ներողություն խնդրելուց: Եթե ժամանակը դեռ անվերադարձորեն բաց չի թողնված, նա ամբողջ ուժով ձգտում է ուղղել իր սխալը: Իսկ եթե այն մարդը, ում ինքը վնասել է, արդեն չկա ապրողների մեջ, զինվորը լավություն է անում անծանոթ մեկին:

Լույսի զինվորը չի ապաշխարում, քանզի ապաշխարանքը սպանում է: Նա պատրաստ է հաշտվելու, որպեսզի հեռացնի իր պատճառած չարիքը:

115

Ամեն լույսի զինվոր էլ, պատահել է, որ իր մորից լսել է հետևյալ խոսքերը. «Իմ որդին խելացնորության մեջ գլուխը կորցրած սա է արել, սա է արել, բայց իրականում նա շատ լավ մարդ է»:

Զինվորը, չնայած պաշտում է մորը, գիտե, որ դա այդպես չէ: Նա չի մեղադրում իրեն իր չմտածված արարքների համար, բայց և չի ներում իրեն իր գործած սխալների համար, քանզի այդ դեպքում նա երբեք չի կարողանա ուղղել իր ճանապարհը: Առողջ մտածողությամբ զինվելով՝ նա քննում է իր գործունեության արդյունքները, արդյունքները, այլ ոչ թե մտադրությունները, որոնցով առաջնորդվել է իր գործունեությունն իրականացնելիս: Նա պատասխանատվություն է կրում այն ամենի համար, ինչ արել է, անգամ եթե հարկ է լինում թանկ վճարել յուրաքանչյուր սխալի համար:

«Բարձրյալը ծառը պտղիցն է ճանաչում և ոչ թե արմատից» - բարբառում է հինավուրց արաբական ասացվածքը:

116

Զինվորը, մինչև կարևոր որոշում ընդունելը՝ պատերազմ հայտարարել, ընկերների հետ ուրիշ հարթավայր տեղափոխվել, ցանքի համար դաշտ ընտրել, հարցնում է ինքն իրեն. «Ինչպե՞ս կանդրադառնա սա իմ ժառանգների, իմ յոթը պորտի կյանքի վրա»:

Զինվորը գիտե, որ ամեն մի գործ ունենում է երկարաժամկետ հետևանքներ: Նա ուզում է իմանալ, թե ինչ աշխարհ է թողնելու ինքը իր թոռան թոռան թոռան թոռին:

117

Լույսի զինվորին խորհուրդ են տալիս. «Մի բաժակ ջրում փոթորիկ մի՛ բարձրացրու»: Բայց նա հակված չէ դժվարությունները չափազանցնելու և միշտ ջանում է պահպանել անհրաժեշտ անվրդովությունը:

Այնուամենայնիվ, նա երբեք ձեռնամուխ չի լինում չափելու ուրիշի տառապանքների աստիճանը:

Ինչ-որ մի մանրուք, որ իր համար ոչ մի նշանակություն չունի, կարող է կայծի դեր ունենալ և իր եղբոր հոգում կուտակված հիասթափությունը պայթյունի վերածել: Զինվորը հարգում է իր հարազատի տառապանքը և չի համեմատում այն սեփական ցավի հետ:

Ամեն մեկը տառապանքի իր բաժակն ունի:

118

«Հոգևոր ճանապարհի իրականացման համար նախ և առաջ խիզախություն է հարկավոր», - ասում է Գանդին:

Երկչոտ մարդկանց վախեցնող ու ահեղ է երևում աշխարհը: Նրանք ապրում են խաբուսիկ անվտանգության որոնումներով՝ ո՛չ կոչեր նետելով, ո՛չ էլ այդ կոչերը ընդունելով և մինչև ատամները զինվում են պաշտպանելու այն, ինչին իրենց կարծիքով տիրում են: Վախկոտ մարդիկ իրենք են կառուցում իրենց զնդանի պատերը:

Լույսի զինվորը մտովի թափանցում է հորիզոնից այն կողմ: Զինվորը գիտե, որ եթե ինքը աշխարհի համար մի որևէ բան չանի, ապա ոչ ոք այլևս դա չի անի:

Եվ ահա նա Արդար կռվի մեջ է մտնում և օգնում բոլորին՝ կարգին չհասկանալով անգամ, թե ինչու է ինքը դա անում:

119

Լույսի զինվորը կարդում է ուղերձը. Աշխարհի Հոգիները՝ Չիկո Խավիերին. «Այն ամենից հետո, երբ կկարողանաս հաղթահարել դժվարությունները, քո հիշողությամբ վերադարձի՛ր ոչ թե նրան, թե ինչքան դժվարություններ ես քաշել, այլ ուրախություններին, որ դու պատվով ես տարել այդ փորձությունը»: Ծանր հիվանդությունից առողջանալուց հետո ոչ թե մտածի՛ր ապրած տառապանքների մասին, այլ փառք տուր Աստծուն, որ քեզ բուժվելու հնարավորություն է տվել: Մինչև գերեզման հիշողությանդ մեջ պահի՛ր այն բարին ու լավը, որ ծնվել են դժվարությունից: Դրանք քո ուժերը փորձելու հնարավորությունը կդառնան և քեզ վստահություն կներշնչեն նոր խոչընդոտներ հաղթահարելիս:

120

Լույսի զիվորը ուշադիր է ամենօրյա փոքրիկ հրաշքներին: Եթե նա ընդունակ է տեսնելու գեղեցիկը, ապա միայն այն պատճառով, որ իր մեջ կրում է այդ գեղեցիկը, քանզի աշխարհը նման է հայելու, որի մեջ ամեն մեկը տեսնում է սեփական պատկերը: Հիշելով իր թերությունների, իմանալով իր սահմանափակությունների մասին՝ զինվորը, մեկ է, անում է ամեն հնարավորը, որպեսզի ճգնաժամային պահերին պահպանի հոգու առույգությունը: Եվ վերջին հաշվով աշխարհը ջանում է օգնել նրան, չնայած շուրջը եղած ամեն ինչը վկայում են, որ դա այդպես չէ:

121

Այն արհեստանոցներում, որտեղ արարվում է միտքը, զգացմունքների ու զգացումների աղբ է կուտակվում:

Դրանք անցած տառապանքներ են, որ հիմա ոչնչի հարկավոր չեն: Դրանք նախապաշարումներ են՝ անցյալում շատ կարևոր, բայց հիմա՝ անիմաստ ու իզուր:

Լույսի զինվորն էլ ունի հիշողություններ, բայց նա կարողանում է զանազանել օգտակարն ու անիմաստը: Անցյալի ուրախությունների ու տխրությունների աղբը նա դեն է նետում:

«Բայց դա իմ մի մասն է, իմ ճակատագրի մի մասը, - ասում է նրան ընկերը: - Ինչո՞ւ ես պետք է բաժանվեմ այն զգացմունքներից, որոնք ինչ-որ ժամանակ՝ հնում, ծառայել են ինձ իմ կյանքում»:

Լույսի զինվորը ժպտում է, բայց փորձ չի անում նորից զգալու այն, ինչ զգացել է նախկինում: Նա փոխվում է և ուզում է, որ նոր զգացմունքներն ուղեկցեն իրեն այս նոր ուղում:

122

Ուսուցիչը, տեսնելով զինվորին վհատության մեջ, ասում է. «Դու այնպիսին չես, ինչպիսին թվում ես տխրության պահին: Դու ավելին ես: Հիշի՛ր, շատերն են անվերադարձ հեռացել այս կյանքից տարբեր պատճառներով, որ մեր խելքի բանը չի, իսկ դու շարունակում ես ապրել այստեղ: Ինչո՞ւ Աստված իր մոտ է կանչել այդպիսի անհավանական մարդկանց, իսկ քեզ՝ ոչ:

Այդ պահին միլիոնավոր մարդիկ արդեն հույսները կորցրել են: Նրանք ո՛չ տխրում են, ո՛չ լալիս, նրանք այլևս ոչինչ չեն անում, նրանք միայն սպասում են, թե երբ կանցնի ժամանակը:

Նրանք կորցրել են կատարվածի նկատմամբ արձագանքելու ունակությունը:

Դու, նրանց հակառակ, տխրում ես:

Տխրությունը վկայում է, որ քո հոգին չի մեռել»:

123

Անվերջանալի թվացող կռվի թեժ պահին երբեմն լինում է, որ զինվորի ուղեղում ինչ-որ միտք է փայլատակում, և նա միանգամից հաղթանակ է տանում:

Այդ պահին նա մտածում է. «Ինչո՞ւ էի ես այսքան ժամանակ տանջվում և մղում մի մարտ, որը կարող էի շահել ոչ թե այնքան ուժերով, որքան ես ծախսել եմ, այլ ուղիղ դրա կեսով»:

Իրականում ցանկացած առաջադրանք ավելի հեշտ է թվում, երբ արդեն լուծված է: Եվ մեծագույն հաջողությունը, որ հիմա թվում է, թե հասել է առանց ջանքերի, եղել է հենց այդ վերջին օղակը աննկատ մնացած մանր-մունր հաղթանակների շղթայում:

Եվ այդժամ զինվորը հասկանում է կատարվածի իմաստը ու հանգիստ քնում: Եվ փոխանակ իրեն մեղադրելու, որ չափից ավելի երկար է գնացել դեպի իր նպատակը, զինվորը հրճվում է, որ, այնուամենայնիվ, վերջիվերջո հասել է իր նպատակին:

124

Այսպիսով՝ երկու տեսակի աղոթք կա:

Առաջինը՝ երբ մարդը խնդրում է Աստծուն, որ կատարվեն որոշակի իրադարձություններ՝ ջանալով հուշել նրան, թե ինչ պիտի անի: Գործելու համար ո՛չ ժամանակ, ո՛չ տարածություն չի տրվում Ամենակալին: Բայց Նա, Ով ավելի լավ գիտե, թե մեզանից յուրաքանչյուրին իրականում ինչն ավելի լավ կլինի, բանի տեղ չի դնում այդպիսի աղոթքը և շարունակում է անել այն, ինչ ճիշտ է համարում:

Եվ աղոթողին թվում է, թե իր աղոթքները լսելի չեն Աստծուն:

Երկրորդը՝ երբ մարդը, չգիտակցելով անգամ, թե ինչ ուղիներ է առաջարկում Արարիչը, սպասում է, թե իր կյանքում երբ պիտի իրագործվի Բարձրյալի կողմից նախանշվածը:

Նա խնդրում է ազատում տանջանքներից ու ցավերից, խնդրում է հոգու առույգություն Արդար Կռիվ մղելու համար և չի մոռանում ամեն պահի կրկնել. «Թող քո կամքը լինի»:

Լույսի զինվորը հենց այդպես է աղոթում:

125

Զինվորը գիտե, որ բոլոր լեզուներում ամենակարևոր բառերը կարճ են:

Այո՛:

Աստված:

Սեր:

Սրանք այն բառերն են, որոնք հեշտ են արտաբերվում և ահռելի դատարկ տարածություններ են լցնում իրենցով:

Մի բառ էլ կա. դա էլ է կարճ, և շատ մարդիկ այն դժվար են արտաբերում:

Դա «ոչ»-ն է:

Նա, ով երբեք «ոչ» չի ասում, իրեն համարում է մեծահոգի, հասկացող, դաստիարակված, քանզի բառն այդ հռչակված է որպես եսասիրական, ոչ հոգևոր և չարագործ:

Բայց զինվորն այդ թակարդը չի ընկնում:

Զինվորի կյանքում պատահում են այնպիսի պահեր, երբ ուրիշին «այո» ասելով՝ ինքն իրեն այդ նույն պահին ասում է «ոչ»:

Դրա համար էլ նրա շուրթերը երբեք «այո» չեն ասում, եթե սիրտը «ոչ» է ասում:

126

Նախ և առաջ՝ Աստված ինքնազոհություն է: Մենք տանջվում ենք այս կյանքում, բայց ձեռք ենք բերում երանություն հաջորդում:

Երկրորդ՝ նա, ով ուրախանում է ու զվարճանում, երեխա է: Պիտի սկսենք ապրել լարվածության մեջ:

Երրորդ՝ ուրիշներն ավելի լավ գիտեն, թե մեզ ինչ է հակավոր, որովհետև նրանք ավելի փորձառու են:

Չորրորդ՝ ուրիշներին երջանկացնելը մեր պարտքն է: Պետք է ուրախացնել նրանց, եթե անգամ մեզանից կպահանջվի շատ կարևոր մի բանից հրաժարվել:

Հինգերորդ՝ խորհուրդ չի տրվում խմել երանության բաժակից, քանզի սովորում ենք դրան, իսկ բաժակն այդ միշտ չէ, որ հայտնվում է մեր ձեռքին:

Վեցերորդ՝ պետք է ընդունել բոլոր պատիժներն ու պատուհասները: Մենք մեղավոր ենք:

Յոթերորդ՝ մեր զգացած վախը ահազանգի ազդանշան է: Պետք չէ ռիսկի դիմել:

Ահա սրանք են այն պատվիրանները, որոնց ոչ մի լույսի զինվոր չի ենթարկվի:

127

Մարդկանց հսկայական բազմությունը խռնված է դրախտ տանող ճանապարհին:

«Ի՞նչ իրավունքով են այստեղ խմբվել մեղավորները», - հարցնում է մաքրակրոն մեկը:

«Անառակն ուզում է մասնակցել տոնախմբությանը», - գոչում է բարոյախոսը:

«Ինչպե՞ս կարելի է թողություն տալ անհավատարիմ կնոջը, չէ՞ որ նա մեղք է գործել», - տեղեկացնում է հասարակական արժեքներին նախանձախնդիր մեկը:

«Ինչպե՞ս կարելի է բուժել կույրին, ով մտածում է միայն իր ցավի մասին և անգամ շնորհակալություն չի հայտնում իր տեսողությունը վերականգնելու համար», - մազերն է պրճկում ապաշխարող մեղավորը:

«Դու չհակառակվեցիր նրան, որ կինը օծի քո մազերը թանկարժեք յուղով: Ինչո՞ւ այն չվաճառել և այդ փողով հաց գնել», - ոտքը գետին է խփում ժուժկալ մեկը:

Հիսուսը ժպտում է և դարպասները բաց պահում:

Լույսի զինվորները ներս են մտնում, ինչքան էլ որ իրենց հետևից հիստերիկ ճիչեր շպրտվեն:

128

Հակառակորդն օժտված է իմաստնությամբ:

Առաջին իսկ հնարավորության դեպքում նա բաց է թողնում իր վստահելի ու գործող զենքը՝ խարդավանքները: Իսկ դրանք գործադրելով՝ կարող է այլևս ջանք չթափել. ուրիշները կգործեն իր փոխարեն: Անզգուշորեն սպրդած բառերը ոչնչացնում

են ամիսների վստահությունը, ներդաշնակություն գտնելու համար տարիներ տևած որոնումները:

Հաճախ է պատահում, որ զինվորն ընկնի այդ թակարդը: Նա չգիտե, թե որ կողմից է իր վրա հարված իջնելու, չգիտե, թե ինչպես հերքի սուտը: Խարդավանքները պաշտպանության իրավունք չեն տալիս, ինտրիգներն առանց դատ ու դատաստանի դատավճիռ են կայացնում:

Եվ այդժամ զինվորը, հաշտվելով հետևանքների հետ, ընդունում է իր՝ չվաստակած պատիժը, քանզի բառը հզոր է, և նա դա գիտե: Նա լուռ տառապում է և երբեք չի հարվածի թշնամուն նրա իսկ զենքով:

Լույսի զինվորը վախկոտ չէ:

129

Արաբական ասացվածքն ասում է. «Տո՛ւր հիմարին հազար խելք, միևնույն է, նրան միայն պետք կլինի քոնը»:

Իր այգին մշակել սկսելով՝ լույսի զինվորը նկատում է, թե ինչպես է հարևանը հետևում իր աշխատանքին՝ սրտի թրթիռով երազելով խորհուրդ տալ իրեն՝ ինչպես գործ դնել, մտքերը «փխրեցնել», ձեռք բերածը «ջրել»:

Եթե զինվորը հետևի այդ խորհուրդներին, ապա վերջիվերջո կզբաղվի ուրիշի գործով, և այգին, որ հիմա ինքը մշակում է, կդառնա հարևանի գաղափարների արտահայտությունը:

Բայց իսկական լույսի զինվորը գիտե, որ ամեն այգի իր գաղտնիքն ունի, և միայն այգեգործի համբերատար ձեռքն է ընդունակ՝ բացահայտելու այդ գաղտնիքը: Դրա համար էլ նա նախընտրում է իր բոլոր մտադրություններն ու ուշադրությունը բևեռել արևին, անձրևին ու տարվա եղանակներին:

Քանզի իրեն հայտնի է՝ հիմարը, որին չափից ավելի է հետաքրքրում ուրիշի այգին, չի հոգ չի տանում իր սեփական այգուն:

130

Անհրաժեշտ է պայքարի մեջ մտնել բաց աչքերով: Եվ պետք է, որ կողքիդ հավատարիմ մարդիկ լինեն:

Պատահում է, որ լույսի զինվորի հետ կողք կողքի կռվող ընկերը դառնում է նրա հակառակորդը: Բոլոր մնացած զգացմունքներից առաջ դա ատելություն է առաջացնում, բայց զինվորը գիտե՝ դրանով կուրացած մարտիկը դատապարտված է կորչելու և ցնդելու մարտում:

Այդժամ նա ջանում է հիշել ամեն լավն ու բարին, որ արել է ներկա հակառակորդն այն ժամանակ, երբ դեռ իր մարտական ընկերն էր: Ջանում է հիշել, թե ինչը բերեց նրան այսպիսի կտրուկ փոփոխության, ինչպիսի հոգեկան ցավեր կուտակվեցին և մեկը մյուսին զորացնելով՝ նպաստեցին դրան: Ջանում է հասկանալ, թե ինչը ստիպեց իրենցից յուրաքանչյուրին ընդհատել երկխոսությունը:

Կատարյալ մարդիկ չկան, ինչպես չկան նաև անհույս հիմարներ: Ահա թե ինչի մասին է մտածում զինվորը՝ հայտնաբերելով, որ իրնքը նոր հակառակորդ ունի:

131

Լույսի զինվորը գիտե, որ նպատակը չի արդարացնում միջոցները:

Քանզի նպատակներ չկան, կան միայն միջոցներ: Կյանքը նրան անծանոթից տանում է անհայտություն: Կեցության ամեն մի վայրկյանը պարուրված է այրող խորհրդավորությամբ. զինվորը չգիտե՝ որտեղից է գալիս, ինչպես նաև չգիտե՝ ուր է գնում:

Բայց այստեղ նա պատահականորեն չի հայտնվել: Եվ հոգին ցնծում է՝ անսպասելիորեն տարվելով նոր տպավորություններով: Եվ ոչ հազվադեպ նա վախ է զգում, բայց դա զինվորի համար բնական է:

Եթե զինվորը բոլոր մտքերը ուղղի միմիայն նպատակին հասնելուն, ապա նա ընդունակ կլինի իր ճանապարհին հայտնված նախանշանները չնկատելու: Եթե նա կենտրոնացնում է իր ամբողջ ուշադրությունը մի հարցի վրա, ապա կորցնում է պատասխանները, այնինչ դրանք իր կողքին են:

Դրա համար էլ զինվորն ապավինում է բարձրագույն ուժին:

132

Լույսի զինվորը գիտե՝ գոյություն ունի «կասկադի արդյունք» հասկացությունը: Իրեն մի անգամ չէ, որ հաջողվել է տեսնել այն: Մարդն իրեն պահում է ոչ այնպես, ինչպես պիտի պահի նրա հետ, ով չունի բավարար խիզախություն՝ հակահարված տալու իրեն: Վերջինս էլ, ազդվելով ցուցաբերած փոքրոգությունից՝ իր ողջ կատաղությունը թափում է ավելի թույլի վրա, ով էլ իր հերթին վերականգնվում է պատասխան տալ չկարողացողի հաշվին, այսպես, վերևից ներքև դժբախտությունների իսկական հոսք է թափվում: Ոչ մեկին տրված չէ կանխագուշակել սեփական դաժանության հետևանքները:

Դրա համար էլ իր թուրը քաշելիս զինվորը բավական շրջահայաց է և ընդունում է միայն իրեն արժանի հակառակորդին: Եթե զայրույթն իշխում է նրան, բռունցքով հարվածում է քարաժայռին և վնասում ձեռքը:

Ձեռքը շուտով լավանում է, այդժամ այն երեխայի նման, ով պատիժ է կրում միայն նրա համար, որ հայրը պարտություն է կրել, սպին պահպանվում է մինչև կյանքի վերջը:

133

Հրաման է տրված տեղափոխվելու մի ուրիշ տեղ, և զինվորը տեսնում է բոլոր նրանց, ում հետ ինքը ընկերացել է իր ճանապարհին անցնելիս:

Ոմանց նա սովորեցրել է լսել, թե ինչպես են ղողանջում ստորջրյա տաճարի զանգերը, մյուսներին պատմել է տարբեր պատմություններ՝ խարույկի շուրջը նստած:

Նրա սիրտը լի է տխրությամբ, բայց զինվորը գիտե, որ իր թուրն օրհնված է, և ինքը պիտի հնազանդվի նրա թելադրանքին, ում նվիրել է իր պայքարը:

Այդժամ լույսի զինվորը շնորհակալություն է հայտնում իր ուղեկիցներին, խորը շունչ քաշում և շարունակում առաջ գնալ՝ իր հետ տանելով անմոռանալի հիշողություններ իր անցած ճանապարհահատվածի մասին:

Վերջաբան

Երբ կինը լռեց, արդեն գիշեր էր:

Նա ու տղան երկա՜ր նայում էին նորածին լուսնին:

- Այն, ինչ Դուք ինձ պատմեցիք, լի է հակասություններով, - ասաց տղան

Կինը ոտքի ելավ:

-Մնաս բարով, - ասաց նա: - Դու իմացար, որ ծովի հատակից լսվող զանգերի ղողանջը հնարանք չէ, բայց լսեցիր այն միայն այն բանից հետո, երբ հասկացար, որ ձայնն այդ անբաժանելիորեն միաձուլված է քամու ֆշշոցին, ճայերի կռինչին, արմավենու ճյուղերի սոսափյունին:

Հենց այդպես էլ լույսի զինվորը գիտե. իր շուրջը եղած ամեն ինչ՝ իր հաղթանակները, իր պարտությունները, իր սքանչացումները, իր հիասթափություններն անբաժանելիորեն միաձուլված են Արդար Կռվին: Եվ զինվորը սովորում է անհրաժեշտ պահին անհրաժեշտ ռազմավարություն օգտագործել: Զինվորը խնդիր չունի՝ հետևողական ու տրամաբանված լինելու, քանզի նա սովորել է ապրել իր հակասություններով:

- Ո՞վ եք Դուք, - հարցրեց տղան:

Բայց կինը, նրանից արդեն հեռացած, քայլում էր ջրերի վրայով դեպի այնտեղ, որտեղ պսպղում էր նորածին լուսինը:

ՎԵՐՋ